

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԱՌԱՆՁԵՄ ԳԱՌՆԻԿԻ ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

ՀԱՏԿԱՆՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ժ. 02. 01 – «ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Լ. Ս. Հովսեփյան

բան. գիտ. դոկտոր Վ. Լ. Կատվայան

բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Թ. Ս. Շահվերդյան

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հ. Թումանյանի
անվան պետական համալսարան:**

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. սեպտեմբերի 25-ին՝
ժամը 15⁰⁰ - ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում
գործող՝ ԲՈՀ-ի 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր.
Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. օգոստոսի 24-ին:

**Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկ., դոցենտ**



Ն. Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը

Վերջին տասնամյակներում (անցյալ դարի իննսունական թթ.) մեծ հետաքրքրություն են հանդես բերում **Ասրվածաշնչի հատուկ անունների նկատմամբ** արտասահմանում, մինչդեռ հայ լեզվաբանության մեջ *Ասրվածաշնչի* հատուկ անունների մասին զուտ բանասիրական տեսական հետազոտություններ շատ քիչ կան:

Մովսես Խորենացին «*Հայոց պատմության*» առաջին գրքում փորձում է ցույց տալ հայոց մեծերի ծննդաբանությունը և դա կատարում է՝ հենվելով *Ասրվածաշնչի* տվյալների վրա, ու այդ ծննդաբանությունը սկսում է Նոյի որդի Հաբեթից: Ինչպես ճիշտ նկատում է Գ. Զահուկյանը, Խորենացին լայնորեն օգտվում է *Հին Կտակարանում* տարածված մեթոդից՝ անձնանունների ստուգաբանությունից, ու փորձում է անձնանունների միջոցով ստուգաբանել տեղանուններն ու ցեղանունները, կապ ստեղծել դրանց միջև:

Հակոբ Անասյանի «*Հայկական մատենագրություն*» աշխատության Բ հատորի (Երևան, 1976) «*Ասրվածաշունչ մատյան*» հոդվածում նշվում է, որ *Ասրվածաշնչի* հայերեն թարգմանության հատուկ անունները տառադարձական, ուղղագրական, քերականական ուսումնասիրության նյութ չեն դարձել:

Ավետարանների հատուկ անունների տառադարձման և հոլովման ուսումնասիրման ուղղությամբ որոշակի աշխատանք կատարվել է Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերի կողմից «*Ավետարանների հայերեն տեքստը՝ ըստ Մատթեոսի և Մարկոսի*» ուսումնասիրության մեջ¹: Մակլերը համեմատել է հայերեն 10 ձեռագրի և 2 տպագրի ոչ ամբողջական տվյալները հունական քննական բնագրի հետ, փորձել է ցույց տալ, որ հայերեն թարգմանությունը կատարվել է ոչ թե ասորերենից, այլ հունարենից, որից և տառադարձվել է հատուկ անունների մեծ մասը:

Մ. Մինասյանը մանրակրկիտ ուսումնասիրել և կազմել է մի ուշագրավ աշխատանք՝ «*Աւետարանների եւ Գործքի յարուկ անունների ուղղագրութիւնը եւ հոլովումը*»²:

Ասրվածաշնչի մեջ մտնող գրքերի հայերեն թարգմանության բնագրային քննությամբ զբաղվել են շատ հայագետներ՝ Ն. Բյուզանդացի,

¹ Ֆ Մակլեր, *Le texte armenien de l' Evangile d' apres Matthieu et Marc*, Փարիզ, 1919:

² Մ. Մինասեան, *Աւետարանների եւ Գործքի յարուկ անունների ուղղագրութիւնը եւ հոլովումը*, Ժնև, 1988:

Ա. Բագրապուրունի, Ս. Մերկ, Ռ. Բլելկ, Պ. Էսապայան, Ե. Դուրյան, Ս. Կոզյան, Հ. Զոհրապյան, Ն. Ակինյան, Հ. Ամայան, Ա. Զեյթունյան և այլք, բայց այլևայլ հարցերի վերաբերյալ կարծիքները մնում են տարբեր, հաճախ հակասական, երբեմն՝ անորոշ, իսկ մեր՝ հատուկ անունների ուսումնասիրության առումով՝ միայն ձեռագրերում առկա տարընթերցումների ներկայացմամբ:

Հետազոտության թեմայի արդիականությունը

Աստվածաշունչը եղել և մնում է քրիստոնյա աշխարհի թիվ մեկ ընթերցվող գիրքը: Եվ այդ ընթերցանությունը շատ հաճախ առաջադրում է մեկնության ու մեկնաբանման անհրաժեշտություն ոչ միայն աստվածաբանական, այլև լեզվաբանական ամենատարբեր առումներով, մասնավորապես հատուկ անունների:

Աստվածաշնչի հատկանվանաբանությունը գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող բնագավառ է, որի ուսումնասիրությունը մշտապես ունի խիստ արդիական հնչողություն ու նշանակություն:

Հայ ընթերցողի սեղանին դրված են *Աստվածաշնչի* տարբեր թարգմանություններ՝ գրաբար, արևմտահայերեն և արևելահայերեն: Հենց միայն հատուկ անունների առումով ներկայացվում է այնպիսի խայտաբղետ պատկեր՝ տարընթերցումներ, թարգմանական տարբերակներ, հատուկ անվան բացակայություն կամ դրա վերածում հասարակ անվան, որ ընթերցողը հաճախ խճճվում է սուրբգրային տեքստը լիարժեք ընկալելու տեսանկյունից:

Հետազոտության ուսումնասիրության նյութը, նպատակը և խնդիրները

Աստվածաշնչյան հատուկ անունների լեզվական քննությունը ծագումնաստուգաբանական, պատմական, ոճական տեսանկյունից մեր աշխատանքի հիմնական նպատակն է, որի համար ուսումնասիրել ենք հայերեն երեք թարգմանություններ. նախ՝ *Աստվածաշնչի գրաբար* օրինակը, որը 1997թ. հրատարակվել է Երևանում 1895թ.՝ Կոստանդնուպոլսում տպագրված և 1929թ. Վիեննայում վերահրատարակված գրքի հիման վրա՝ «*Աստուածաշունչ մարեան Հին եւ Նոր Կրակարանաց*»: Պայմանականորեն այս օրինակը անվանել ենք Ա-1: Այդ օրինակը համեմատել ենք «*Աստուածաշունչ մարեան Հին եւ Նոր Կրակարանաց... Յաշխարասիրութենէ րէշան Յոհաննու Զօհրապեան վարդապետի...*» հրատարակության հետ (1805, Վենետիկ):

Ա-2 օրինակը **արևմտահայերեն** հրատարակություն է՝ «**Աստուածաշունչ գիրք Հին եւ Նոր կրակարանաց երբայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած**» (1890, Կոստանդնուպոլիս):

Ա-3-ը *Աստվածաշնչի* 1994թ. **արևելահայերեն** նոր թարգմանության վերահրատարակությունն է՝ «**Աստուածաշունչ մարեան Հին եւ Նոր կրակարանների, արեւելահայերէն նոր թարգմանութիւն**» (1999, Ս. Էջմիածին-Երևան):

Մեր հիմնական խնդիրն է եղել այս գրքերի զուգահեռ համեմատությամբ քննել աստվածաշնչյան հատուկ անունները, դրանց բոլոր տարընթերցումները, թարգմանական տարբերակները, փորձել վերականգնել կամ ընտրել հատուկ անվան առավել ճիշտ ձևը, առանձնացնել ու տարբերակել համանուն հատկանունները:

Անունների համակողմանի ուսումնասիրության, տարընթերցումների մեջ ճիշտ տարբերակի որոնման խնդիրը ուղղակիորեն պարտադրում է նաև համեմատություն հունարեն թարգմանության հետ: Այնպես որ մեր ձեռքի տակ եղած հրատարակություններից կարևորագույնը հունարեն հոչակավոր *Յոթանասնիցն է՝ Սեպտուգինտա*:

Համեմատությունը ասորական հնագույն թարգմանություններից **Պեշիթայի** հետ շատ դեպքերում հավաստում է մեր թարգմանիչների կողմից այդ բնագիրը ևս իբրև թարգմանական աղբյուր և բնագիր օգտագործելու փաստը:

Անհրաժեշտության դեպքում դիմել ենք *Աստվածաշնչի* ռուսերեն, լատիներեն, գերմաներեն, եզակի դեպքերում՝ անգլերեն թարգմանություններին, որոնց համեմատությունը հայերենի հետ հաճախ հետաքրքիր դիտարկումներ կատարելու հնարավորություն է տվել:

Անունների հսկայական քանակը լեզվական ուսումնասիրման նյութ լինելուց բացի, իր հերթին հիմք է դառնում ուշագրավ եզրահանգումներ կատարելու հենց *Սուրբ Գրքի՝* որ լեզվից թարգմանված լինելու մասին:

Հայ հին և միջնադարյան գրականության մեջ հիմնականում, ինչպես նաև ժամանակակից գրականության մեջ սփռված են աստվածաշնչյան հարյուրավոր անուններ, որոնք սովորական ընթերցողի համար հաճախ դժվար ընկալելի են, եթե նրանք սուրբգրային անձերին չեն ճանաչում, տարբեր անուններ ու անվանումներ անձանոթ են, կամ բազմաթիվ են միևնույն անունը կրող սուրբգրային հերոսներն ու տեղանունները: Ահա թե ինչու մեր ուսումնասիրության նպատակն է հայ ընթերցողին ճանաչելի դարձնել այդ անուններն ու դրանք կրող անձներին:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը

Անունների համակողմանի քննությունը կատարված է մի շարք մեթոդների կիրառմամբ՝ պատմական, պատմահամեմատական, զուգադրական: Քանի որ մեր նպատակը այդ անունների ներկայացումն է լեզվի պատմական զարգացման մեջ, ուստի իբրև համեմատության եզրեր վերցվել են թե՛ գրաբար, թե՛ արևմտահայերեն, թե՛ արևելահայերեն թարգմանված *Աստվածաշնչի* լավագույն համարվող գրքերը: Անունների զանազան տարբերակների զուգադրական քննությունը հունարենի, ասորերենի, ռուսերենի, որոշ դեպքերում նաև գերմաներենի հետ անշուշտ նպաստում է գտնելու ճիշտ ու նախնական տարբերակը, կատարելու անհրաժեշտ եզրահանգումներ:

Հետազոտության գիտական նորույթը

Այս ուսումնասիրության մեջ կարևորել ենք մի շարք, հիմնահարցեր, որոնցից յուրաքանչյուրը որոշակիորեն նորություն է աստվածաշնչյան հատկանվանաբանության մեջ կամ նոր խոսք է արդեն առկա որևէ տեսակետի վերաբերյալ:

Նախ և առաջ հենց *Ներածության* մեջ տալիս ենք *Աստվածաշնչի* հատկանվանաբանության եզրաբանությունը:

Ապա կարևորում ենք *Աստվածաշնչի* հայերեն թարգմանությունների խնդիրը. ե՞րբ և ինչպե՞ս է կատարվել ու ի՞նչ ճանապարհ է անցել, ո՞ր թարգմանությունների՝ հունարեն, ասորերեն, ազդեցությունն է կրում հայերեն թարգմանությունը, ո՞րն է Մեսրոպ Մաշտոցի դերը *Սուրբ Գրքի* թարգմանության գործում:

Հայագիտության մեջ սովորաբար խոսվում է *Աստվածաշնչի* գրաբար թարգմանության երկու փուլի մասին: Մինչդեռ մենք կարծում ենք, որ եղել է թարգմանության երեք շրջան. Մաշտոցը դրսում՝ Սամոսատում, իր աշակերտների հետ կատարում է *Սուրբ Գրքի* առաջին թարգմանությունը, որն ըստ մեր իսկ պատմիչների և Կորյունի՝ ներառում էր *Հին Կտակարանի* ամբողջությամբ, ինչպես նաև Նոր Կտակարանի որոշ գրքեր:

Հին Կտակարանը նախանշում է անվանադրության սկիզբն ու ընթացքը. ինչպե՞ս և ինչո՞ւ անվանակոչվեցին մարդիկ և տեղանունները՝ ըստ սուրբգրային տեքստերի. սա մեր ուսումնասիրության ելակետային հարցերից մեկն է:

Մեր աշխատանքի նորոյթներից մյուսն այն է, որ հատուկ անունների ծագումնաստուգաբանական բացատրությունները ի մի են բերվում և զուգահրահամեմատական քննությամբ բազմաթիվ անունների վերաբերյալ տրվում են առավել ճիշտ մեկնությունները:

Հնարավորինս փորձել ենք պարզել, թե հատուկ անունները եբրայերեն բնագրից թարգմանաբար ներկայացնելը հա՞յ թարգմանիչների նախաձեռնությունն է եղել, թե՞ նրանք դա ընդօրինակել են ձեռքի տակ եղած հունարեն կամ ասորերեն բնագրերից:

Ոչ միայն *Ասրվածաշնչի* տարբեր թարգմանություններում, այլև տվյալ թարգմանության միևնույն գրքում առկա են անձերի և նրանց անունների հետ կապված բազմաթիվ հակասություններ, որոնց վերաբերյալ փորձել ենք պարզաբանումներ կատարել:

Ասրվածաշնչի գրքերի քննական բնագրերը կազմվել և կազմվում են բազմաթիվ ձեռագրերի համեմատության հիմքի վրա, իսկ այդ համեմատությունը ի ցույց է դնում հարյուրավոր տարընթերցումներ. մասնավորապես հատուկ անուններում դրանք այնքան շատ են, որ կարևորվում է այդ տարընթերցումների մեջ գտնել հնարավոր ճիշտ տարբերակը: *Սուրբ Գրքի* հատուկ անունները, հատկապես անձնանունները նույնությամբ չեն փոխանցվում ուրիշ լեզուներ, այլ ենթարկվում են որոշակի փոփոխությունների: Օտար լեզվական ազդեցությամբ ու տառադարձական կանոններով պայմանավորված՝ լեզվում ստեղծվում են միևնույն անվան ուղղագրական տարբերակներ: Ահա թե ինչու աստվածաշնչյան անունների տառադարձության և ուղղագրության, նաև քերականական որոշ առանձնահատկությունների (հատուկ անունների հոլովում, հոգնակիի դրսևորումներ) քննությունը դառնում է մեր ուսումնասիրության կարևոր նորոյթներից:

Առանձնակի կարևորություն ենք տվել աստվածաշնչյան անունների ոճական քննությանը:

Հետազոտության փորձարկվածությունը և գործնական նշանակությունը

Ուսումնասիրության արդյունքները և հիմնադրույթները, սկսած 2000 թ., հոդվածների ձևով հրապարակվել են հանրապետության և արտերկրի գիտական պարբերականներում, նաև մենագրության ձևով, որը տպագրության է երաշխավորել ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի գիտխորհուրդը:

Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրոսները շարունակաբար լսել են դասընթացը՝ *Աստվածաշնչի հատկանվանագիտություն*, որը որոշակիորեն նպաստել է նրանց գիտելիքների խորացմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում և երաշխավորվել պաշտպանության:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը (312 էջ) կազմված է ներածությունից, յոթ գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածություն

Քանի որ հատկանվանաբանությունը գիտության այն յուրահատուկ բնագավառն է, որը հետազոտման առարկա է թե՛ լեզվաբանների, թե՛ պատմաբանների, թե՛ աշխարհագրագետների համար, որոնցից յուրաքանչյուրն իր տեսանկյունից է ուսումնասիրում հատուկ անունները՝ կարևորելով և դիտարկելով հարցը նաև ինչ-որ տեղ ընդհանուր հատկանվանաբանության շրջանակում, ուստի ներածությունում համառոտ ներկայացվել են հատկանվանաբանության դերն ու նշանակությունը, այդ ասպարեզում հայ լեզվաբանության մեջ կատարվածը:

Անհնար է կատարել սուրբգրային հատուկ անունների քննություն՝ առանց դրանք նախապես որոշակի խմբերում դասդասելու. ահա թե ինչու **Ներածության** մեջ տալիս ենք *Աստվածաշնչի* հատկանվանաբանության եզրաբանությունը՝ **Հարուկ անուններ և Հարուկ անվանումներ**, որոնցից առաջինը ներառում է երեք խումբ՝

I. Աստվածների, կուռքերի, հրեշտակների ու հրեշտակապետերի անուններ

II. Անձնանուններ

III. Տեղանուններ

Այս խմբերի բոլոր անունները քննում ենք՝ ըստ ծագման, ըստ իմաստի կամ նշանակության, լեզվական, պատմական առումներով:

Որպես հատուկ անվանումներ են ներկայացվում՝

I. Վերնագրերը,

II. Մականունները,

III. Ազգանունները,

IV. Ոճանունները:

Անպայմանորեն պետք է նկատի ունենալ, որ *Սուրբ Գրքի* անունները տարանջատելի են երկու խմբի՝

1. բուն աստվածաշնչային,

2. *Աստվածաշնչում* գործածված:

Ներածության մեջ նախանշվում են այն ելակետային հարցերը, որոնք քննվում են բուն աշխատանքի գլուխներում և բաժիններում կամ ենթագլուխներում:

Գլուխ առաջին

Ատենախոսության առաջին գլուխը՝ «*Սուրբ Գիրքը և նրա հայերեն թարգմանությունները*» ներառում է երկու հիմնական խնդիր՝

ա) *Սուրբ Գրքի* թարգմանությունը,

բ) *Սուրբ Գրքի* (կանոնը) կառուցվածքը:

Հայագիտության մեջ սովորաբար նշվում է, որ գրերի գյուտից հետո Մաշտոցի և Սահակի առաջին գործը լինում է *Աստվածաշնչի* հայերեն թարգմանությունը: *Սուրբ Գրքի* հայերեն բանավոր թարգմանությունը, ըստ մեր իսկ պատմիչների, արդեն սկսվել էր դեռ մինչև գրերի գյուտը: Չմոռանանք, որ 301 թ. Հայաստանն ընդունում է քրիստոնեությունն իբրև պետական կրոն, և Գրիգոր Լուսավորիչը համարվում է *Սուրբ Գրքի* առաջին, այսպես ասած, բանավոր թարգմանիչը:

Գրերի գյուտին գրեթե զուգահեռ, Սամոսատում Մեսրոպ Մաշտոցի և նրա երկու աշակերտների կողմից սկիզբ է դրվում *Սուրբ Գրքի գրավոր* թարգմանությանը՝ այն սկսելով *Առակաց* գրքից, ներառելով *Հին Կրակարանի* քսաներկու գրքերը, մասամբ *Նոր Կրակարանի* որոշ գրքեր (Կորյուն, Փոքր Կորյուն, Մովսես Խորենացի): Մաշտոցը, հայրենիք վերադառնալով, Սահակին և իրենց առաջին աշակերտներին ներկայացնում է հայոց այրուբենը ու նրանց վստահում *Սուրբ Գրքի* անշուշտ ոչ ամբողջական թարգմանության հետագա լրացումը:

Այս կարծիքները մերժում են Ստ. Մալխասյանցը և Հր. Աճառյանը: Առաջինը նշում է, որ հնարավոր չէր հենց Ասորիքում թարգմանել երկու գիրքն էլ՝ թե՛ *Հինը*, թե՛ *Նորը*, այս տողերը համարում է լուսանցագրություն, որ հետո մտել է բնագրի մեջ: Հերքելով Խորենացու այս խոսքի հավաստիությունը՝ Մալխասյանցը հենվում է Խորենացու մյուս խոսքերի վրա (Գ, ԾԴ), ուր նշվում է, թե *Ս. Գիրքը* թարգմանեց Սահակը ասորերենից

հունարենը չլինելու պատճառով, և այնուհետև (Գ, ԿԱ) Սահակը և Մեսրոպը հունարենից թարգմանեցին մի անգամ թարգմանածը: Սակայն Խորենացու խոսքերը կասկածի տակ առնող Ստ. Մալխասյանցը Փավստոս Բուզանդի պատմության առաջաբանում Խորենացու մասին գրում է հետևյալը. «*Խորենացին իսկական մտածող հեղինակ է. նրա ամեն մի խոսքը չափված է, կշռված, ո՛չ ավելորդ խոսք, ո՛չ չափազանցություն: Նա հիշում է, ինչ որ ասել է մի անձի կամ դիպվածի մասին և ոչ մի անգամ չի ընկնում հակասության մեջ*»³: Ուրեմն որքանո՞վ է ընդունելի Մալխասյանցի այս հակասական մոտեցումը⁴:

Իսկ Հր. Աճառյանն էլ նշում է, որ եթե հավաստի համարենք Խորենացու և Փոքր Կորյունի խոսքերը, ապա ուրեմն պիտի ընդունենք, թե Ս. Գրքը հայերեն է թարգմանվել երեք անգամ. առաջինը՝ Մեսրոպի ձեռքով Սամոսատում, երկրորդը՝ Սահակի ձեռքով Մեսրոպի՝ Աղվանք քարոզության գնացած ժամանակ և երրորդ՝ թարգմանիչների վերադարձին՝ Եգիպտի ընկերակցությամբ⁵:

Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ մենք կարևորել ենք յուրաքանչյուր պատմիչի կամ մասնագետի խոսքը, նույնիսկ Փոքր Կորյունի, ի դեպ, վերջինիս լեզուն շատ ուսումնասիրողներ (այդ թվում՝ Ղևոնդ Ալիշանը) ավելի բարձր են դասում, քան ընդարձակ Կորյունինը:

Այդ գործընթացը որոշակիանում է 409-410թթ., և այդ շրջանից է հայ բանասիրության մեջ մտնում **փութանակի** կատարված թարգմանություն անվանումը՝ «*գլառաջագոյն գյանկարծագիւր զփութանակի զթարգմանութիւն*»⁶: Սա մեր մատենագրության մեջ հայտնի է որպես Ս. Գրքի առաջին թարգմանություն, իսկ ըստ մեզ՝ սա արդեն երկրորդ թարգմանությունն է:

Մեր թարգմանիչները Եփեսոսի ժողովից հետո Հայաստան են բերել *Սուրբ Գրքի* Որոգինյան կամ Վեցիջյան տարբերակը, որով հնարավորություն են ստացել իրենց կատարած «*փութանակի*» թարգմանությունը այդ օրինակով թե՛ լրացնելու, թե՛ խմբագրելու:

Կարծում ենք, որ *Սուրբ Գրքի* գրաբար թարգմանությունը իր մեջ

³ **Փավստոս Բուզանդ**, *Պատմություն Հայոց*, «Հայաստան», Եր., 1968, էջ 54:

⁴ Մալխասյանցի տեսակետը մերժում է նաև Շահե Աճեմյանը: Տե՛ս **Շահե արք. Աճեմյան**, *Հայերէն Աստուածաշունչը (հայագիտական ուսումնասիրություններ)*, Եր., 2006, էջ 35:

⁵ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 311:

⁶ Տե՛ս Կորյուն, *Վարք Մաշտոցի*, աշխ.՝ Ա. Մաթևոսյանի, Եր., «Հայաստան», 1994, էջ 100:

ներառում է ոչ թե երկու, այլ երեք տարբեր վիճակներ, և դրանք անպայմանորեն պետք է առանձնացվեն՝

- ա) **Սամոսառայան կամ Մեսրոպայան,**
- բ) **Փութանակի կամ Սահակ-Մեսրոպայան,**
- գ) **Սահակ-Մեսրոպայան:**

Յավոք, մենք չունենք **Մեսրոպայան** այն թարգմանությունը, որը կատարվել է դրսում՝ Սամոսատում, որը շատ հարցերի պատասխան կտար: Այդ տարբերակն է դարձել հիմք հետագա թարգմանությունների համար, և այսօր արդեն հնարավոր չէ մեզ հասած անգամ լավագույն համարվող ձեռագրերի մեջ տարանջատել նախնականը հետագա մշակումներից: Անշուշտ, **Մեսրոպայան** կամ նախնական թարգմանության մեջ դարձյալ կլինեին բազմաթիվ տարընթերցումներ ու հակասություններ, որոնք արդեն պայմանավորված կլինեին եբրայերեն, ասորերեն կամ հունարեն բնագրերով և ոչ թե մեր թարգմանիչների կամ ձեռագիր ընդօրինակողների աշխատանքով: Ասել է թե՛ այս երեք բաժանումները լայն առումով արտահայտում են *Սուրբ Գրքի* հայերեն թարգմանության անցած ուղին, իսկ նեղ առումով այս երեքը մեկտեղված դարերի հեռավորությունից մեզ ներկայանում են իբրև հայերեն *Աստվածաշնչի* մեկ ամբողջական՝ **Սահակ-Մեսրոպայան ոսկեղենիկ թարգմանություն**, որն էլ հետագայում մեր գրիչների համար դարձել է ընդօրինակման նմուշ: Լավագույն ձեռագիր օրինակներն էլ հիմք են դարձել *Աստվածաշնչի* Ոսկան Երևանցու, Մխիթար Սեբաստացու, Արսեն Բագրատունու, Հ. Զոհրապյանի տպագիր *Աստվածաշունչ* գրքերի ստեղծման համար:

Որ գրաբար թարգմանության վերջնական տարբերակը խմբագրվել է Որոգինյան կամ Վեցիջյան տեքստերով, փաստում են շատերը: Ա. Զեյթունյանը գրում է. «Հայերեն բնագիրը ամենասերտ հարաբերության մեջ է *Աստվածաշնչի* հունարեն **Յոթանասնից** բնագրի **Որոգինյան** խմբագրության հետ, մի հանգամանք, որ հաստատվում է նաև մեր կատարած համեմատություններով»⁷:

Սուրբ Գրքի թարգմանությունը որևէ կոնկրետ թվականի հետ կապելը ճիշտ չէ. Աստվածաշնչի թարգմանությունը անպայմանորեն պետք է դիտարկել իբրև մի գործընթաց, որն սկսվել է դեռ մինչև գրերի գյուտը:

Տեղին է ուղղակի մեջբերել Վարագ Առաքելյանի հետևյալ դիտար-

⁷ **Շ. արք. Աճեմեան, Հայերէն Աստուածաշունչը**, Եր., 2006, էջ 96:

կումը. «Աստվածաշնչի թարգմանությունը V դարի սկզբում միանգամից չէր կարող գլուխ բերվել, առնվազն 10-ից 15 տարի էր հարկավոր, որպեսզի մեր դեռևս **մեծ փորձ չունեցող թարգմանիչները** (ընդգծումը մերն է – ՓՄ) այն ժամանակվա դժվարին պայմաններում կարողանային այդ հսկա գրքի հայացումը գլուխ բերել»⁸:

Այս նույն բաժնում կարևորել ենք նաև *Սուրբ Գրքի* մեջ ներառված գրքերի, հատկապես այդ գրքերի վերնագրերի առումով:

Ներկայիս հայոց կանոնը բաղկացած է 75 գրքից (*Հին Կտակարան՝ 39-ը՝ նախականոն, 9-ը՝ երկրորդականոն և Նոր Կտակարան՝ 27*): Նախականոն գրքերի (հինկտակարանյան 39 և նորկտակարանյան 27) հարցում համաձայնելով Քույր եկեղեցիների հետ՝ հայոց կանոնը տարբերվում է երկրորդականոն գրքերի խնդրում. հայոց երկրորդականոն 9 գրքերի վրա (Ա Եզրաս, Հուդիթ, Տոբիթ, Մակաբայեցիների Ա, Բ, Գ, Իմաստություն Սողոմոնի, Սիրաք, Բարուք, ինչպես նաև Դանիելի մարգարեությունը և Եսթերի գրքի որոշ հավելումներ) հունականը հավելում է մեկ գիրք ևս, որը պարականոն է հայ եկեղեցու համար:

Պետք է նկատի ունենալ, որ *Աստվածաշնչի* մեջ մտնող գրքերի վերնագրերը ունեն որոշակի զանազանություններ գրաբար, արևելահայերեն, արևմտահայերեն տարբերակներում, այնպես որ դրանք տրվում են հենց ուսումնասիրության այս բաժնում:

Գլուխ երկրորդ

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Աստվածաշնչի հայուկ անունների բառարանները»**, ներկայացնում է հատուկ անունները համաբարբառներում և բառարաններում, որոնք գրեթե ամբողջությամբ ներառված են մեր ուսումնասիրության մեջ՝ **Թադևոս վարդապետ Աստվածատրյանի՝ «Համաբարբառ հին և նոր կրակարանաց»** և **Վահան Սահակյանի՝ «Համաբարբառ Աստվածաշունչ մատրեանի Հին և Նոր Կրակարանաց արդի աշխարհաբարով»** աշխատությունները. վերջինում հատուկ անուններն ընդհանրապես առանձնացված են և ներկայացված բառարանի վերջում: Աստվածաշնչյան հատուկ անունների ուսումնասիրման հիմք են դարձել **«Բառք եբրայեցոց»**, **«Մեկնութիւն անուանց եբրայեցոց»** ձեռագիր, Երեմիա Մեղրեցուն վերագրվող **«Բառգիրք Հայոց»**

⁸ Տե՛ս Վ. Առաքելյան, *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, Եր., 1984, էջ 6:

բառարանները, Ոսկան Երևանցու հրատարակած առաջին տպագիր *Աստվածաշնչի Ոսկանյան անվանացանկը*, որը նույնությամբ կրկնվում է Մխիթար Սեբաստացու հրատարակած *Աստվածաշնչի հավելվածում*, «**Բառգիրք յարուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին եւ Նոր կրակարանաց**» բառարանը (ԲՅԱ): Վերջինս ընդգրկված է «**Հին հայկազեան բառարանի**» երկրորդ հատորում, և մեր կողմից առանձնակի կարևորվել է ու դարձել աշխատանքի համար իբրև սկզբնաղբյուր բառարան⁹: Բառարանը ներառում է աստվածաշնչյան գրեթե բոլոր հատուկ անունները՝ շուրջ 5095:

Պատմական տեսակետից հետաքրքրություն ներկայացնող այս բառարանը ժամանակակից տեսանկյունից լուրջ քննություն չի բռնում, քանի որ այդ ստուգաբանությունների մի մասը ճիշտ չէ. ընթերցողը խճճվում է անունների ստուգաբանությունների լաբիրինթոսում: Հատուկ անունների նշանակությունները բազմաթիվ են, միմյանց երբեմն խիստ հակասող:

Աստվածաշնչի համաբարբառ բառարաններից է «**Բառարան սուրբ գրոց հանդերձ պարկերօք, աշխարհացուցօք և տախտակօք**»-ը (ԲՍԳ), որն ունեցել է երկու հրատարակություն՝ 1879թ. և 1881թ.: 1992 թվականին բառարանը վերահրատարակվում է երրորդ անգամ:

Այս բաժնում ներկայացվող վերջին բառարանը 2001 թ. մեր կողմից հրատարակված «**Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարանն**» է: Ժամանակագրական առումով այս բառարանը վերջիններից է¹⁰, և մենք աշխատել ենք այստեղ ի մի բերել, մեկտեղել անունների վերաբերյալ առկա տարբեր կարծիքները, լրացնել հատկանվանաբանության այն բաժինը, որը բառարանագրությունն է: Սույն բառարանը կազմելիս մենք օգտվել ենք թե՛ վերը հիշատակված, թե՛ նմանատիպ այլ (հայ և այլալեզու) բառարաններից, համեմատել միևնույն անվանը վերաբերող ամենատարբեր տեսակետներ և ներկայացրել դրանք մեր բառարանում:

⁹ Մենք հակված չենք կարծելու, թե ԲՅԱ-ի հեղինակը հաստատապես Չաքարիա Ալեքսանյանն է: Մխիթար Սեբաստացու կողմից հրատարակված *Աստվածաշունչը* (1733), ինչպես գիտենք, ուներ արդեն հատուկ անունների հավելված բառարան, որտեղ նույն սկզբունքներով, ինչպես ԲՅԱ-ում, ներկայացված են աստվածաշնչյան անունները, ուստի կարծում ենք, որ ԲՅԱ-ի կազմման մեջ լուրջ դերը դարձյալ Սեբաստացունն է, որը չկարողացավ իր կենդանության ժամանակ հրատարակել այն: Ահա թե ինչու մեր աշխատանքում հղում կատարելիս հաճախ նշում ենք նաև Աբբահոր անունը:

¹⁰ Ավելի ուշ հրատարակվեցին **Ֆ. Գրիգորյանի** *Աստվածաշնչի հանրագիտարան* գրքի երեք հատորները, Եր., 2013-2014:

Բառարանի ստեղծման համար հիմք են ծառայել *Աստվածաշնչում* տեղ գտած բոլոր այն անունները, որոնք գոնե մեկ անգամ գործածվել են հայ բանաստեղծության մեջ: Բառարանի մեջ են ընդգրկվել նաև այն անունները, որոնցով կոչվել են հայ սրբերը:

Յուրաքանչյուր գլխաբառ ներկայացված է հինգ բաժիններով՝ լեզվական-ստուգաբանական, պատմաաշխարհագրական, ոճական-իմաստային, դարձվածային ու բառակազմական, բնագիր գրականությամբ և այդ ամբողջը՝ հաստատված օրինակներով:

Գլուխ երրորդ

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Հափուկ անունների (նաև ազգանունների) ու դրանց թարգմանական տարբերակների դրսևորումները Աստվածաշնչում»**, կազմված է երեք բաժիններից, որոնցից առաջինում՝ **«Հին Կտակարանն իբրև հափուկ անունների սկզբնաղբյուր»**, քննվում է *Հին Կտակարանում* որոշակիորեն գործող այն սկզբունքը, ըստ որի՝ անունները մեծ մասամբ իմաստային առումով բացատրվում, մեկնաբանվում են, տրվում են դրանց բառացի նշանակությունները: Անունը դառնում է ոչ միայն անձերը միմյանցից տարբերակելու միջոց, այլև այդ անվամբ ասես դրսևորվում են տվյալ անձի էությունը, բնավորության որևէ կողմ, թեկուզ արտաքին որևէ հատկանիշ:

Հազարամյակների հեռավորությունից *Ծննդոցի* բազմաթիվ անուններ սուրբգրային տեքստում մեզ են ներկայանում մեկնություններով, որոնք պատճառաբանված են, հիմնավորված, որոնք ոչ միայն ներկայացնում են անվան իմաստը, այլև տրամաբանորեն փաստարկում ու հաստատում տվյալ անվան բառացի նշանակությունը: Այսպես՝ ըստ *Հին Կտակարանի* ունենք **Աբրամ** (հուն.՝ **Αβράμ**, ասոր.՝ **ܐܒܪܐܡ**) (*հայր բարձր*) և **Աբրահամ/Աբրահամ** (հուն.՝ **Αβραάμ**, ասոր.՝ **ܐܒܪܗܐܡ**) (*բազմության հայր*). «Եւ իմ ահաադիկ ուխտը ընդ քեզ. եւ եղիցես **հայր բազմութեան ազգաց**. Եւ ոչ կոչեսցի այսուհետեւ անուն քո Աբրամ, այլ եղիցի անուն քո Աբրահամ. զի **հայր ազգաց բազմաց եղի զքեզ**» (Ծն. Ժէ 4-5), այսինքն՝ հայերեն տեքստը անունը տառադարձել է ըստ ասորերենի՝ *Աբրահամ*:

Հին Կտակարանը (մասնավորապես *Ծննդոց* գիրքը) ներկայացնում է մարդկության պատմության մի այնպիսի ժամանակաշրջան, երբ մարդիկ առանձնանում, տարբերակվում, անհատականացվում էին այնպիսի անուններով, որոնք ուղղակի տրամաբանական կապ էին ապահովում տվյալ անձի ներկայի և ապագայի միջև. տրվում էին անվանումներ համապատասխան տվյալ պահին, ժամանակին ու իրադրությանը, հերոսի էությանը,

արտաքինին, այսինքն՝ տվյալ անձը կամ տեղանունը կրում էր իրեն հատուկ, բնորոշ անվանումը, և որն աստիճանաբար պետք է դառնար պայմանական (ժամանակի ընթացքում՝ այլ անձերի անվանելիս, նախնական իմաստը մղվում է հետին պլան). այս առումով *Հին Կտակարանը* դառնում է հատուկ անունների առաջացման սկզբնաղբյուր:

Այսպես՝ Եվային Աստված *Կին* (եբր.՝ *חַוָּה*) կոչեց, քանի որ, ըստ *Հին Կտակարանի*, տղամարդու կողից ստեղծվեց. «Այս այժմ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեացի Կին, զի յառնէ իւրմէ առաւ» (Ծն. Բ 23-24): Բայց դա բնավ չդարձավ նրա պայմանական անունը կամ, այսպես ասած, հատուկ անունը. մինչդեռ Ադամը նրան կոչեց *Եվա* (որ է՝ *կյանք*) (Գ 20)՝ թե՛ իր իշխանությունը հաստատելով նրա վրա, թե՛ ցույց տալով նրա առաքելությունը: Հայ թարգմանիչները, հետևելով հունարենին, գրաբար թարգմանության մեջ տվել են *Եվա* անվան բառացի նշանակությունը ևս՝ «Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ *Կեանս* (հուն.՝ *Ζωή*, ասոր.՝ *ܟܘܢܝܘܬܐ* *Խաւվա*), զի նա է մայր ամենայն կենդանեաց»:

Հին Կտակարանը, լինելով հատուկ անունների մի նախնական սկզբնաղբյուր, ներկայացնում է այդ անունները՝ հստակ չտարրորոշելով դրանք հասարակ անուններից, հաճախ հատուկ անվան փոխարեն տալով եբրայերենում գործածվող այդ անվան բառացի իմաստը, որն էլ մեզ՝ հետագա ընթերցողներին, պատկերացում է տալիս անունների, մասնավորապես հատուկ անունների առաջացման մասին:

Անձի անունը փոխանցվում է իր ժողովրդին, որոշակի տեղավայրերի, այլ անձերի: Բերենք մի քանի այդպիսի անուններ: Հակոբը որոշակի պահի ստացավ նոր անուն՝ *Իսրայել*, որ բառացի նշանակում է *մարտնչող*: Եվ *Իսրայել* անձի անունով կոչվեցին երկիրը, ժողովուրդը, դաշտը և այլն: Այս առումով ուշագրավ է Գ. Ջահուկյանի հետևյալ համեմատությունը. «*Հին Կտակարանից* եկող անունների քննությունը ցույց է տալիս հների մտածողության մի բնորոշ գիծը՝ անձնանունները այստեղ շատ դեպքերում անձնավորում են ժողովուրդների (հանդես են գալիս որպես էպոնիմներ), և զարմանալի չէ, եթե Խորենացին այս նույն եղանակով Հայկի և Արամի մեջ անձնավորում է հայ-արմեններին»¹¹: *Հին Կտակարանում* սա համընդհանուր բնույթ է կրում՝ ստեղծելով համանուն հատկանուններ, որոնք կարելի է բաժանել իմաստային մի քանի խմբերի. անձի անունը դառնում է՝

ա) ժողովրդի անուն,

¹¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները*, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1981, թ. 3, էջ 49:

- բ) երկրանուն,
- գ) լեռնանուն,
- դ) ջրանուն:

Քանան անձի անունից **Քանան երկիրը** տարբեր ժամանակներում տարբեր կերպ է անվանվում՝ ամենասկզբում **Քանան**. (Հս. ԻԲ 10), **Ավելայաց երկիր** (Եբր. ԺԱ 9), **Եբրայեցիների երկիր** (Ծն. Խ 15), **Իսրայելի երկիր** (Եզկ. ԻԷ 17), **Հուդայի երկիր** (Բ Թգ. Ե 5), **Հրեաստան** (Ա Թգ. ԺԷ 1), **Սուրբ երկիր** (Ձք. Բ 12):

Սիդոն կամ **Սիդոն** անունը (հուն.՝ **Σιδών**, ասոր.՝ **ܣܝܕܘܢ** *Սայդոն*, ռուս.՝ *Сидон*) կապվում է Քանանի անդրանիկ որդու՝ **Սիդոնի** հետ. «Եւ Քանան ծնաւ զՍիդոն զանդրանիկ իւր» (Ծն. Ժ 16): Այս անվամբ հետո կոչվում է աշխարհի հնագույն ծովեզերյա քաղաքներից մեկը, որ կառուցում է Սիդոնը: Նաև երբեմն քաղաքի անունով է կոչվում **Միջերկրական ծովը**. «Եւ եղև սահմանք Քանանացոց՝ ի Սիդոնէ մինչև ի գալ ի Գերարա եւ ի Գաղա, մինչև ի գալ ի Սոդոմ եւ ի Գոմոր...» (Ծն. Ժ 19):

Ըստ **Աստվածաշնչի՝ Բաաղը** կուռքի անուն լինելուց բացի նաև սովորական անձնանուն է՝ Ա Մնց. Ե 5. «Որդի նորա Բաաղ», Թ 36, 42. «Բաաղ ծնաւ զՅովադո», որպես տեղանուն է գործածվում Հետուի գրքում՝ ԺԵ 9, 10. «Հանէ սահմանն ի Բաաղ», Ա Մնց. Դ 33. «Մինչև ի Բաաղ», որը նույն Կարիաթարիմն է:

Քրիստոնեության ընդունմամբ և **Աստվածաշնչի** թարգմանությամբ հայերենի անվանարանը համալրվեց եբրայական, ասորական, հունական բազմաթիվ անուններով՝ բացարձակ մեծամասնությամբ հունական տառադարձությամբ: Ոչ միայն նոր անձնանուններ մտան շրջանառության մեջ ու դարձան խիստ օգտագործելի ու սովորական, այլև այդ անձնանունները դարձան ազգանվանակերտ հիմքեր՝ ստեղծելով հարյուրավոր ազգանուններ, ինչպես՝ **Աբրահամյան, Աբգարյան, Դավթյան, Իսրայելյան, Սողոմոնյան, Ռուբենյան, Եփրեմյան, Դանիելյան, Ղազարյան, Հովասափյան, Սամսոնյան, Միքայելյան, Աբելյան, Շմավոնյան, Փիլիպոսյան** և այլն:

Երկրորդ բաժնում՝ **«Աստվածաշունչը որպես հայերեն ազգանվանակերտ ձևերի սկզբնաղբյուր»**, խոսվում է այն մասին, որ հայոց ազգանունների առաջացման և ձևավորման ընթացքը ցույց տվող մի ուրույն սկզբնաղբյուր է **Աստվածաշունչը**, որի տարբեր գրքերում արդեն իսկ հանդիպում են հայոց ազգանունների որոշակի կաղապարներ՝ **-յան(-յանց)/-եան և -ացի, -եցի, -ցի** վերջածանցներով:

Ի սկզբանե ազգանուններ չեն եղել, եղել են միայն անուններ, ուստի ժամանակի հետ անունների կրկնություններից ու շփոթություններից խուսափելու համար ստեղծվել են դրանց տարբերակման այլևայլ միջոցներ¹²: Ամենամասնական տարբերակումը անհատին որևէ մականուն տալն էր, ինչպես՝ **Շմավոն/Սիմոն Նախանձահույզ, Հոբ Երանելի, Սողոմոն Իմաստուն** և այլն:

Ամենամասնական տարբերակներից մյուսը, որը շատ տարածված կառույց է *Սուրբ Գրքում*, անվան հետ հայրանվան ներկայացումն էր, ինչպես՝ «**Որդիք Յուդայ Փարէս, Եսրոմ եւ Քարմի**» (Մնց. Դ 1), կամ **Սաբէէ որդի Բոքորեայ**, որոնց համապատասխան արևելահայերեն տարբերակներն են՝ **Հուդայի որդիներ Փարեսը, Եսրոմը և Քարմին, Բոքորի որդի Սաբէեն**: Այս ձևերը, որոնք ակնհայտ ցույց են տալիս սերում, ծագում, պատկանելություն, առավելապես կիրառված են *Հին Կտակարանի* գրքերում, հատկապես *Հնգամատյանում*: Հետագայում այս ձևերն էլ հիմք են դառնում անձերի տարբերակման մի նոր միջոցի առաջացման՝ **-եան**-ով կազմություններին: Բայց ոչ անմիջապես: Նախ աստիճանաբար այս կաղապարներում բաց է թողնվում **որդի**-ն, և անունը տրվում է արդեն ուղղակիորեն **Յակոբոս Չեբեղեայ**, փոխանակ **Յակոբոս որդի Չեբեղեայ, Յակոբոս Ալփեայ** փոխանակ **Յակոբոս որդի Ալփեայ**: Ինչպես տեսնում ենք, գրության մեջ առկա է **յ**, որը թերևս չէր արտասանվում, իսկ **ն**-ի հավելումը ավելի բարեհունչ է դարձնում այն: Հաջորդ քայլում արդեն սրանք սկսում են տրվել ուղղակի՝ **Յակոբոս Ալփեան, Յուդա Յակոբեան**:

Իսրայելյան ազգանվան հիմքը *Աստվածաշնչի Իսրայել* անունն է, իբր Իսրայելին (անձին կամ երկրին) պատկանող, վերաբերող, Իսրայելի, ինչպես նաև Իսրայելի սերունդը: *Դատավորաց* գրքում կարդում ենք. «*Եւ քաղաքի անունը իրանց հոր Իսրայելեան Դանի անունովը՝ Դան կոչեցին...*» (ԺԸ 29):

Սրանց մի մասն արդեն իսկ *Աստվածաշնչում* գործածվում են սերման, ծագման նշանակությամբ, որ հայերեն սուրբգրային թարգմանություններից անցնելով շարականներ, եկեղեցական գրականություն, մատենագրություն՝ դարձավ հայերիս համար մերօրյա ազգանունների հիմք:

Աշխատանքում ներկայացվում են **-յան/-եան**-ի ծագման մասին տարբեր կարծիքներ ու տեսակետներ՝ Աճառյանի, Աբեղյանի, Զահուկյանի,

¹² Սրանց քննությանն է անդրադառնում Հր. Աճառյանը *Հայոց անձնանունների քառարանի* Ե հատորում, ինչպես նաև մանրամասն ներկայացված են Տ. Ավետիսյանի *Հայկական ազգանուն* գրքում:

և նշվում, թե որ կարծիքն է առավել համոզիչ և ընդունելի:

Աստվածաշնչում այս կազմությունների դրսևորումներին անդրադառնալիս պետք է նկատի ունենալ, որ ի սկզբանե **-եան-**ով ձևը առաջին սերունդն է ամրագրում, ինչպես՝ **Եղիազար Ահարոնյան (Ելք)**, որ նշանակում է **Ահարոնի որդի Եղիազարը**, մինչդեռ մերօրյա ընկալմամբ տվյալ անձնանուն հիմքով **յան-**ով կազմությունը կարող է չնշանակել առաջին սերունդ, այլ արտահայտել՝ 1. ած. *տվյալ անձի սերունդն ընդհանրապես, նրա տոհմը*: 2. *Տվյալ անձին հալոսկ՝ վերաբերող*: 3. *Ընդհանրապես ազգանուն*:

Ազգանունների երկրորդ կաղապարը **-ացի/-եցի** ածանցներով տեղանուն հիմքերով կազմություններն են, որոնք բացարձակ գերիշխում են *Աստվածաշնչում*, հատկապես *Թագավորությունների* գրքերում, ինչպես՝ **Ազան Բեթելացի, Եսերոն Բեթղահեմացի, Եղան Ջաբուղոնացի, Հռուֆ Մովսեբացի, Դովել Եղովմայեցի, Եման Եգրայելացի**, ինչպես նաև *Նոր Կտակարանում* **Հուդա Իսկարիովթացի, Հիսուս Նազովրեցի, Պիղապոս Պոնտացի, Սիմոն Կյուրենացի, Մարիամ Մագդաղենացի, Հուդա Գալիլեացի** և բազմաթիվ այլ օրինակներ:

Այս կաղապարը սուրբգրային գրականության պատճառով խիստ տարածվեց հատկապես 5-17-րդ դարերում՝ ընկալվելով մականունազգանուն:

Այս ածանցների ծագման հարցում լեզվաբանները համակարծիք են: Հյուբշմանը նշում է որ **-ացի-**ն հայկական է, բայց այն ոչ թե ածանց, այլ վերջավորություն է համարում՝ բերելով **նածրացի, նազովրեցի** օրինակները:

Ջահուկյանը սրանք համարում է հնդեվրոպական ծագման՝ ենթադրելով **-աց-**ով, **-եաց-**ով հիմքային ձևերի սեռական-տրականի հետ բաղադրություն¹³:

Ազգանունների կազմության և առաջացման մասին խոսելիս Հր. Աճառյանը երկրորդ տեղում է դնում անձի որտեղից լինելու հանգամանքը, ինչպես՝ **Գրիգոր Նարեկացի, Գևորգ Սկևռացի, Խաչատուր Տարսոնացի** և այլն:

Աստվածաշնչի, մասնավորապես *Հին Կտակարանի* գրաբար և արևելահայերեն թարգմանություններում (Ա-1, Ա-3) եբրայական բազմաթիվ անուններ տրվում են հայերեն թարգմանված: Արևմտահայերեն բնագրում

¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 801:

(Ա-2) թարգմանություններ հազվադեպ են հանդիպում. տրվում են տվյալ անունների եբրայական ձևերը:

Հատկապես *Հնգամայրանում* մեզ հանդիպում են բազմաթիվ տեղա- նուններ, որոնք թարգմանված են, ինչպես՝ **Արմավենիների քաղաք** (Երիքով), **Արեգ քաղաք** (Օն, Հելիոպոլիս), **Անդորրություն** (Ռոբովթ), **Գերեզման քաղաք** (Համոնա), **Քաջաց քաղաք** (Գեսեմ) և այլն: Ահա թե ինչու սույն աշխատանքի՝ «**Հափուկ անունների թարգմանական տարբերակները Աստվածաշունչ գրքերում**» բաժինը այս կարգի թարգմանություններին է վերաբերում:

Աստվածաշնչի հայերեն թարգմանական երեք տեքստերում էլ՝ Ա-1, Ա-2, Ա-3, հատուկ անունները տրվում են տարբեր ձևերով: Ասենք ավելին. եբրայական բնագրում առկա տեղանունը հայերեն տեքստում դարձել է հասարակ անուն, և սովորական ընթերցողը չի կարող ենթադրել, որ տվյալ հատվածում եղել է բնագրային հատուկ անուն:

Վերցնենք **Ջառիթափ** անունը, որը համարժեքն է եբրայական **Եթլ/դ/ոն** տեղանվան: Այն գործածված է *Եզեկիելի* գրքի ԽԸ գլխի 1-ին հատվածում (հուն.՝ **τῆς Καταβάσεως՝ զառիթափ**, լատ.՝ Aethlon, ասոր.՝ ܐܬܠܢ *Խըթոն*, ռուս.՝ Хетлон): Գրաբար տեքստը մեզ հիմնցնում է *զառիթափ* տարբերակը փոքրատառով. «...ըստ կողման **զառիթափին**, որ զափան է ընդ մուփս **Եմաթոս**»՝ տողատակում նշելով եբրայական տեքստը. «*առ ճանապարհան Եթղնայ յԵմաթ*»: Արևելահայերեն տարբերակում ևս տրվում է **զառիթափ**, միայն արևմտահայերեն տարբերակում պահված է եբրայերեն տեղանունը. «*Հիսիսի ծայրէն՝ Եթլոնի ճամբուն քովը դէպ ի Եմաթ*»: Ինչպես նկատում ենք, տեքստում չի տրվել բուն եբրայական անունը, մինչդեռ բնագրից հստակ ընկալվում է անվան տեղանուն լինելը: Եվ այս փոփոխության հիմքը հունարեն տեքստն է:

Մեզ թվում է, որ հատուկ անունների թարգմանական տարբերակների առկայությունը *Աստվածաշնչի* հայերեն տարբեր գրքերում՝ գրաբար, արևմտահայերեն, արևելահայերեն, ըստ էության, հիմնավորում է այն, որ հայերեն *Աստվածաշունչ* գիրքը հներից մեկն է, որտեղ հատուկ անունների թարգմանություններում տարբեր մոտեցումներ են նկատվում: Գրաբար և արևելահայերեն տեքստերը ձգտել են թարգմանել հատուկ անունները, հատկապես տեղանունները: Երբեմն դա տեղին է, արդարացված, երբեմն եբրայական հատուկ անունը ներկայացվել է դարձյալ որպես հատուկ անուն, բայց կամ տեքստից բխող, ինչպես՝ **Ողկոյզի ձոր**, կամ բառացի նշանակությամբ թարգմանված, ինչպես՝ **Լալոնից անտառ**, երբեմն էլ՝

հատուկ անունն իսպառ վերացվել է՝ խաթարելով տեքստի բովանդակությունը: Արևմտահայերեն տեքստը չի թարգմանում (կամ գրեթե չի թարգմանում) հատուկ անունները, իսկ եթե թարգմանում էլ է, ուրեմն այն իրոք հասարակ անուն է, և կամ պետք է որ թարգմանվի:

Գլուխ չորրորդ

«Աստվածաշնչյան հարուկ անունների գրության և ձևաբանական առանձնահատկությունների քննություն» գլխում կարևորել ենք հատուկ անունների տառադարձական և ուղղագրական օրինաչափություններն ու շեղումները, տվել բազմաթիվ տարընթերցումներ ու հակասություններ, ինչպես նաև ներկայացրել հատուկ անունների հոլովումն ու հոգնակիակազմության առանձնահատկությունները:

Աստվածաշնչյան հատուկ անունները, անցնելով մեր բառապաշար, ենթարկվել են արտասանական, քերականական, իսկ գրության մեջ նաև ուղղագրական օրինաչափ փոփոխությունների, որը հայերենի զարգացման տարբեր փուլերում դրսևորում է ինչպես նմանություններ, այնպես էլ որոշակի տարբերություններ:

5-8-րդ դարերի թվակիր որևէ ձեռագիր մեզ չի հասել: Բնական է, որ չի հասել նաև *Սուրբ Գրքի* որևէ ձեռագիր նմուշ: *Աստվածաշունչը* մեզ է ներկայանում միջնադարյան գրիչների արտագրած օրինակներով:

Աստվածաշնչի թարգմանության շրջանում մեր ուղղագրությունը եղել է հնչական, ասել է թե՛ ինչպես գրել են, այնպես էլ՝ կարդացել: Սա երևում է փոխառությունների տառադարձությունից.

Ժամանակի ընթացքում *Սուրբ Գրքի* հարյուրավոր ձեռագիր արտագրություններում և զանազան տպագրություններում աղավաղվել ու այլափոխվել են աստվածաշնչյան անձնանուններն ու տեղանունները: Դա ակներև է դառնում *Հին Կտակարանի* տարբեր գրքերի քննական բնագրերի այլընթերցումների բաժնից (աշխատասիրությամբ Ա. Ջեյթունյանի, Հ. Ամալյանի): Ցավոք, ոչ ոք չի կարող անվերապահորեն պնդել, թե որն է դասական թարգմանության սկզբնական վիճակը, ուստի քիչ թե շատ նախնական տարբերակին մոտենալու միակ միջոցը եղել և մնում է տարբեր բնագրերի համեմատական քննությունը:

Տարբերությունները որոշակիորեն առկա են, և անունների ճիշտ պատկերը վերականգնելու համար թերևս ճիշտ չէ հնագույն եբրայական ձևերի հետ համեմատելը, քանի որ հայ թարգմանիչները ընդհանրապես եբրայական բնագրի հետ գործ չեն ունեցել նույնիսկ *Հին Կտակարանը*

թարգմանելիս. նրանք ձեռքի տակ ունեցել են հունարեն և ասորերեն թարգմանությունները¹⁴: *Սուրբ Գրքի* որոշ գրքերում մի շարք հատուկ անուններ մեզ ներկայանում են թե՛ հունական, թե՛ ասորական տառադարձությամբ, ինչպես՝ **Սամարիա – Շամրին**: Հայնրիխ Հյուբշմանը միանգամայն ճիշտ նկատում է. «*Սուրբ Գրքի* հայ թարգմանիչները աստվածաշնչյան անունները ճշգրիտ վերարտադրել են՝ մեծ մասամբ ելնելով հունական, հազվադեպ՝ ասորական ձևից, որոշ դեպքերում, սակայն, գործածվել է խառը եղանակը՝ ուղենիշ վերցնելով մասամբ (բաղաձայնական համակարգում)՝ ասորական, մասամբ (ձայնավորական համակարգում)՝ հունական ձևը»¹⁵:

Ընդունված է այն կարծիքը, թե եբրայական հատուկ անունները՝ անձնանուն թե տեղանուն, հունարենում գործածվելիս դրսևորում են այն առանձնահատկությունը, որ չեն հղիվվում և գործածվում են միայն հոդերի հետ: Մեր ուսումնասիրմամբ այս կանոնը ընդհանուր չէ, և բազմաթիվ եբրայական անուններ հունարեն տեքստում հանդես են գալիս տարբեր հղովներով: Ասենք, *Ծննդոցում* հանդես եկող *Ադամ* անունը հունարեն թարգմանության մեջ միշտ հանդես է գալիս ուղիղ ձևով և հղովված հոդերի հետ, ինչպես՝ **Αδάμ τὸν Αδάμ τοῦ Αδάμ, τῷ Αδάμ**՝ նշանակելով *Ադամ, Ադամի, Ադամին*: Եվ այդպես անունների բացարձակ մեծամասնությունը: Բայց այդպիսի չհղովվող բազմաթիվ անունների կողքին որոշ անուններ հանդես են գալիս որոշակի հղովակական վերջավորություններով, ինչպես՝ **Σάρα, Σάρρα** – Սառա, **Σαραν** – *Սառայի/ն/*, **Σαρασ** – *Սառայի*, **Ρεβέκκα**-ն կարող է թարգմանվել և՛ *Ռեբեկա/ն/*, և՛ *Ռեբեկա/Ռեբեկային*, իսկ **Ρεβέκκαν** – *զՌեբեկա/ Ռեբեկային*, **Ρεβέκκας** – *Ռեբեկայի* և այլն:

Բազմաթիվ օրինակների քննությունը բերում է այն հետևության, որ ձայնավորներով՝ **-ա, -ի, -ե**, նաև **-ր, -ն, -ս, -քս, -փս** բաղաձայններով վերջացող եբրայական շատ հատուկ անուններ հղովվում են, ինչպես՝ **Անանիա – Ανανάς, -ου** (սեռ.-տր.), **Աննա – Αννα, -ας** (սեռ.-տր.), **Քաբելոն – Βαβυλών – ὠνος** (սեռ.-տր.), **Քարաբբաս – Βαραββᾶς, -α**, և այլն:

Գրաբար թարգմանված *Աստվածաշնչում* հատուկ անունները առանց բացառության հղովվում են:

¹⁴ Հավանական է նաև *Որոզհնյան* օրինակից թարգմանված լինելը:

¹⁵ Հ. Հյուբշման, *Հայերենի քերականություն*, Եր. 2003, էջ 299:

Գլուխ հինգերորդ

Սուրբ Գրքի կենտրոնական դեմքը Աստվածն է, որն *Աստվածաշնչի* տարբեր գրքերում տարբեր անուններով ու անվանումներով է հանդես գալիս: Ահա թե ինչու մենք այս գլխում՝ **«Աստու, Աստվածամոր, կուռքերի և հրեշտակների անունները Աստվածաշնչում»**, ներառել ենք հետևյալ բաժինները. նախ՝ **«Էլոհիմ – Աստված, Սաբավովթ – Ձորությունների տեր բառերի սրուգաբանության շուրջ»** վերնագրի տակ տվել ենք այս անունների վերաբերյալ հայագիտության մեջ առկա տարբեր տեսակետները:

Ըստ ընդունված և տարածված կարծիքի՝ հայերեն *Աստված* բառն ունի հնդեվրոպական ծագում, բնիկ հայերեն բառ է, որի քննությանն անդրադարձել են թե՛ մեր հին մատենագիրները և թե՛ վերջին ժամանակների անվանի շատ հայագետներ՝ Մխիթար Սեբաստացի, Ղևոնդ Ալիշան, Հր. Աճառյան, Գ. Զահուկյան, Վ. Համբարձումյան և այլք:

Բնավ չհավակնելով *Աստված* բառի ստուգաբանության մեջ վերջնական խոսք ասելու՝ աշխատանքում հայտնել ենք նաև մեր դիտարկումները **Էլոհիմ – Աստված, Սաբավովթ – Ձորությունների տեր** բառերի մասին:

Այս մեկնություններում անընդհատ շեշտվում է Աստված՝ որպես **անուն**: Ինչ խոսք, իսրայելցիների համար *անունը* շատ կարևոր էր, և անվանը տրվում էր մեծ նշանակություն: Եվ մենք *Հին Կտակարանում* բազմիցս առնչվում ենք այն փաստին, որ անունները՝ տեղանուն (անգամ ամենաաննշան թվացող) թե անձնանուն, անպայման մեկնաբանվում են: Իսրայելցիները շատ էին սիրում անուններ դնել ամենքին ու ամեն ինչի: Ուրեմն նախ և առաջ պետք է կարևորել հենց այս հանգամանքը՝ **էությունը** և այդ **էությունից բխող անունը**: Տվյալ պարագայում մենք հարցին մոտենում ենք նախ ոչ լեզվական տեսանկյունից: Իսկ բուն լեզվական առումով մենք տեսնում ենք, որ *Աստված*-ը այդ էության անունը չէ. **Աստված հենց այդ գերագույն էակն է, որ Սուրբ Գրքում ստանում է բազում անուններ, անվանումներ**, ընդ որում Հայր Աստվածը՝ իր անունները, Որդի Աստվածը՝ իր. որոշ անուններ տրամաբանորեն վերագրվում են երկուսին էլ: Աստված ոչ միայն ստանում է տարբեր անուններ, այլև ինքն է նախևառաջ բացում իր անունը (Ել. Գ 14): Սա՛ է ամենակարևորը, այսինքն՝ լեզվական առումով պետք է մեկնել **Աստված** բառը՝ հիմքում նկատի ունենալով աստվածային էությունը:

Աստված բառի ստուգաբանությունը ինչ-որ չափով պետք է խարսխվի նաև *Սուրբ Գրքի* փաստերի վրա՝ բնավ չանտեսելով այն, որ թե՛ *Աստված*, թե՛ *Էլոհիմ* ու *Եհովա* և էլի որոշ անուններ ու անվանումներ ավելի հին ծագում ունեն:

Ահա այդ պատճառով էլ մենք այդ ստուգաբանությունը կատարելիս անպայման *Աստված* անունը զուգադրում ենք *Աստվածաշնչի* որոշ, առաջին հերթին *Էլոհիմ*, *Եհովա* և *Սարավո(վ)թ* անունների հետ: Նկատի ունենանք, որ *Էլոհիմը* Աստծու անունը չէ, այլ հենց **Աստված** նշանակող բառը եբրայական բնագրում¹⁶, մինչդեռ *Հին Կտակարանի* եբրայական բնագրում տրվում է աստծու անունը չորս տառով՝ **YHWH**, և մինչև այժմ հայտնի չէ, թե ինչպես պետք է ճիշտ արտասանվեր այդ բառը:

Եհովա և *Աստված* բառերը համարժեք չեն կարող լինել ստուգաբանական իմաստով. **Աստված**-ը համարժեքն է եբրայական բնագրի *Էլոհիմ* անվան, որն ունի նույն նշանակությունն արտահայտող բաղադրիչ՝ **էլ/ալ-աստ = ուժ**:

Հայերեն և ոչ մի թարգմանության մեջ *Էլոհիմ*-ը գործածված չէ. Այն համապատասխան տեղերում տրված է **Աստված**: Բայց *Էլոհիմ*-ի **-է(ե)լ-**ը՝ որպես վերջնաբաղադրիչ արմատ, *Աստվածաշնչի* բազմաթիվ անուններում առկա է, ինչպես՝ **Աբիմեել** – *հայր Աստծու առաքյալ*, **Աբդևել** – *Աստծու ծառա*, **Ասիել** – *արար աստուած*, **Բարաքիել** – *Աստծուց օրհնված*, **Բեսելիել** – *Աստծու հովանու տակ* և այլն:

Էլոհիմը եբրայական բնագրում **Աստված** նշանակող բառն է. այսինքն՝ մեր թարգմանիչները *Էլոհիմի* փոխարեն դրել են **Աստված**: Մինչդեռ *Եհովա*-ն Աստծու անունն է, այն անունը, որով նա *Ելից* գրքում ներկայանում է Մովսեսին:

Վերևում արդեն հիշատակեցինք, որ հայերենում կա **աստ** արմատը, և այն ստուգաբանվում է **ուժ, զորություն**, և այն տրվում է թե՛ Հր. Աճառյանի, թե՛ Գ. Զահուկյանի ստուգաբանական բառարաններում:

Եբրայերենում **-իմ**-ը հոգնակերտ վերջավորություն է, իսկ ինչպե՞ս ընկալել հայերեն **-ած**-ը,՝ ածա՞նց, թե՞ արմատ:

Եթե անգամ համաժամանակյա կտրվածքով **-ած**-ը դիտարկենք որպես ածանց, ապա սկզբնապես այն անկասկած եղել է արմատ: Գ. Զահուկյանը

¹⁶ Սեմական լեզուներում տրվում է **էլ, Էլոհիմ, Ալլահ, Ալահա**, հնդեվրոպական որոշ լեզուներում՝ հունարեն, լատիներեն, հնդկերեն, արիական՝ **Թեոս, Թեոս, Չես, Թեվա**, պարսկերենում՝ **խիվրա**, գերմաներենում՝ **Գոթ**, սլավոնական լեզուներում՝ **Բոգ** և այլն:

«Հայերեն ստուգաբանական բառարանում» գրում է. «-**ած՝** գթած, երկիւղած, ողորմած, յօգնած, ուսած (սրանք հետագայում դերբայացել են), ասած, գործած, կազմած, կոտորած, ձուլած:

Ծագում է **ած-ել** բայի արմատից (հմմտ. գթած «գութ ածող») հնարավոր է համարվում նաև գոյականակազմ **-ած-ի** հնդեվրոպական ծագումը՝ հ.ե. **gʷ** հայ. **ծ** անցմամբ¹⁷: Իսկ **ածել** գլխաբառի տակ արդեն Ջահուկյանը տալիս է բայի իմաստային դաշտը՝ որպես բնիկ հնդեվրոպական արմատ. «agʷ- «քշել, տանել, շարժել» արմատից. հմմտ. հ.հնդկ. aʹjati «քշում է», հ. հուն. á «տանել», լատ. ago «տանել, քշել»¹⁸ հղելով նաև Հր. Աճառյանին:

Սուրբ Գրքի հայերեն տեքստերում *Աստված* նշանակող ևս մի անվանում կա՝ **Սաբա(վ)ովթ**, որը եբրայական բառ է՝ հունական տառադարձությամբ:

Հայ թարգմանիչները **Սաբա(վ)ովթ**-ի դիմաց դրել են **Տէր Զորութեանց**: Ասում ենք՝ դրել են, որովհետև *Սաբա(վ)ովթ*-ը չի ստուգաբանվում, այլ թարգմանվում է իբրև *Տէր զորությանց*՝ նկատի ունենալով *գոր/զորք* իմաստը և *-ովթ* հոգնակիակերտ վերջավորությունը¹⁹:

Նիկողայոս Մառն այս անվանման և *աստված* բառերի մեջ ուղղակի կապ է տեսնում և իր՝ «Հայերի Սաբադիոս աստվածը (Богъ Сабѣціосъ у Армянь)» և «Թրակո-հայկական Sabad'ios-Aswat'-ը և սվանների որսի աստվածությունը» հոդվածներում անդրադառնում է այդ կապին²⁰:

Աստվածաշնչի գրաբար տեքստում (Ա-1) *Սաբաովթ*-ը գործածված է ընդամենը մեկ տասնյակի հասնող չափով: Գրաբար բնագիրը *Եսայու* մարգարեության քսաներկու գլխում և ոչ միայն այդտեղ, այլև տարբեր գրքերում տալիս է *Սաբա(վ)ովթ* տարբերակը. «Եւ կոչեաց Տէր Սաբաովթ յաւուր յայնմիկ» (12): Նույն գրքի 14-15 թվակարգության տակ՝ «Ասէ Տէր Զորութեանց» և հավելում է. «Այդպէս ասէ Տէր Տէր Սաբաովթ»: Տողատակում նշվում է, որ եբրայերենում *Սաբաովթ*-ը *Տէր Զորութեանց* է:

¹⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. բառ., էջ 794:

¹⁸ Տե՛ս նշվ. բառ., էջ 29, ինչպես նաև՝ Հր. Աճառյան, Հարմբ, հ. Ա , էջ 101:

¹⁹ Տե՛ս Մխիթար Սեբաստացու հրատարակած *Աստվածաշունչը*, որն ունի ցանկ՝ *Եբրայեցոց, Քաղղեացոց և Յունաց անուանց թարգմանութիւն*, որտեղ տրված *Սաբաովթ* թարգմանված է՝ *Զորութիւնք*: Ի Վենետիկ, 1733, էջ 1217:

²⁰ Տե՛ս *Богъ Сабѣціосъ у Армянь*, Լրաբեր, 1911, էջ 759-774, իսկ երկրորդը զեկուցումը, կարդացված պատմաբանասիրական բաժանմունքի նիստում 1912թ. սեպտեմբերի 12-ին, տպ. **Н. Я. Марр**, *Трако-армянский Sabadios-aswat и сванское божество охоты.*, Известия Императорской Академии Наук, С.-Петербург, 1912:

Արևելահայերեն բնագիրը միշտ դնում է **Ջորությունների Տեր**, իսկ ռուսերենը՝ *Савоф, Цваот, Адоиаи Цваот, Господь воиств*: Ի դեպ ասենք, որ ռուսերեն տեքստում այս անվան *Господь Савоф* գործածությունը անցնում է երկու հարյուրից, իսկ *Господь Бог Савоф*, ավելի պակաս՝ ընդամենը քսաներկու: Ինչո՞ւ ենք սա շեշտում: Որովհետև հայերեն տեքստում ևս գործում է նույն անվանակարգությունը: Բոլոր այն դեպքերում, որտեղ առկա է *Տէր Ջորութեանց*, գրեթե բացակայում է *Աստված* բառը, իսկ եթե կան երկուսն էլ, կարծում ենք՝ ոչ թե բնագրային է, այլ հետո ավելացված: Այսինքն, եթե չկա, բացակայում է **Աստված** բառը, կնշանակի **Ջորությունների Տերը (Սաբաովթ)** նույնանիշ է նրան և փոխարինում է **Աստված** բառին:

Այսպիսով՝ Ա-1՝ գրաբար, Ա-2՝ արևմտահայերեն, Ա-3՝ արևելահայերեն տեքստերում տրված են միևնույն անվան հետևյալ տարբերակները՝ *Սաբաովթ, Սաբավովթ, Ջորությունների Տեր, Տէր զորութեանց, Ջորաց Տէր Աստուած, զորաց Եհովայ Տէր*:

Ի՞նչ հետևություններ կարող ենք անել **Աստված** և **Էլոհիմ, Սաբաովթ** անունների համեմատական քննությունից:

Որպես ընդհանրություններ կարող ենք նշել նախ այն, որ այս երեք անուններն էլ՝ կազմությամբ բաղադրյալ են՝ **Էլ/Ալ -(ոհ/օ)- իմ, Սաբա -(վ)-ովթ** և **Աստ-(ու)-ած**:

Կարծում ենք, որ **աստուած** բառը պետք է բաղադրել **աստ-ու-ած**, որտեղ **աստ** նշանակում է **զոր, ուժ**, իսկ **ած**-ը **ածել** բայի արմատն է (համաժամանակյա դիտարկմամբ՝ ածանց), որ նշանակում է **իր հեղևից փանել**, այսինքն՝ **զորությամբ փանող**, կամ, թերևս՝ **զորություններ ունեցող** (հմմտ.՝ **ողորմած՝ ողորմող, կարեկցող, գթած՝ գույթ ունեցող**)²¹: Եվ հենց **Տեր Ջորությանցն** էլ նշանակում է **զորություններ ունեցող**:

Սուրբ Գրքի հայերեն տեքստերը **Սաբա(վ)ովթի** դիմաց դրել են թարգմանական տարբերակ՝ **Տեր Ջորությանց, Ջորությունների Տեր**, որը ուղիղ համեմատական է բաղադրիչների իմաստով **Էլոհիմ-Աստված** զուգահեռին՝ **Էլ/ալ-աստ = զոր, ուժ** և **-ովթ/-իմ = եր** հոգնակերտ վերջավորություն:

Աստված բառի մեջ հետագայում **-ած** արմատը (*փանել* իմաստով) մթազնել է, և այն այսօր արդեն պարզապես ածանց է ընկալվում, ինչպես՝ **Գթ-ած, Ողորմ-ած** բառերում, որոնք ևս ակնարկում են Աստծուն:

Քրիստոնեության մուտքով հեթանոսական աստվածները դարձան

²¹ Տե՛ս Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, Եր., 2000, հ. Ա, էջ 324, հ.Բ, էջ 334:

կուռք, դիք կամ չաստված, իսկ նոր հավատը հայ եկեղեցու դավանաբանության մեջ մտցրեց *Աստված, Սուրբ Երրորդություն, Սուրբ Հոգի* անուններն ու անվանումները, որոնց քննությանն էլ նվիրել ենք մեր հաջորդ բաժինը՝ **«Աստծուն և Աստվածամորը տրված անուններն ու անվանումները Սուրբ Գրքում»:**

Այս բաժնի ենթավերնագրերում քննել ենք Հայր Աստծուն, Որդի Աստծուն, Սուրբ Հոգուն և Մարիամ Աստվածածինն տրված անունների ու անվանումների մի մասը՝ *Արարիչ, Բարձրյալ, Է, Սրբեղծող, Բրույտ, Աղովնա, Ամենակալ, Ամենակարող, Սաղայ, Եհովա, Հզոր, Տեր, Հիսուս, Փրկիչ, Քրիստոս, Օծյալ, Էմմանուել, Աստվածորդի, Միածին, Նազովրեցի, Մարդու որդի, Ռաբբի, Վարդապետ, Աստվածամայր* և այլ անուններ:

Այս գլխի հաջորդ բաժինը վերաբերում է կուռքերի անուններին՝ **«Կուռք, դիք, չաստված և դրանց անունները»:** Հին Կտակարանը ընթերցողին առատ նյութ է մատուցում կռապաշտության մասին, և դրա զանազան դրսևորումները իրենց արտացոլումն են գտել հենց կուռքերի անուններում, որոնք բազմաթիվ են ու բազմաբովանդակ: Մեզ համար առաջնայինը **կուռք, դիք, չաստված**, նաև **դև** անունների քննությունն է սուրբգրային տեքստերում, դրանց իմաստային դրսևորումները, միմյանց հետ զուգորդելիությունը: Ի՞նչ անուններով են դրանք տրվում *Աստվածաշնչի* տարբեր գրքերում, ի՞նչ տարրնթերցումներ ունեն, ինչպիսի՞ն է հայ թարգմանիչների վերաբերմունքը այդ անունների հանդեպ և, վերջապես համապատասխանո՞ւմ են դրանք հայերեն տարբեր թարգմանություններում՝ Ա-1 (գրաբար), Ա-2 (արևմտահայերեն), Ա-3 (արևելահայերեն), ինչպես նաև հունարեն և ռուսերեն բնագրերում:

Սուրբ գրքի բազմաթիվ օրինակներից հետևում է, որ **կուռք, դիք, չաստված** կամ աստված (հեթանոսական) անունները ունեն ինչպես իմաստային ընդհանրություններ, այնպես էլ հստակ ուրվագծված տարբերություններ, որն ինչ-որ չափով արտահայտված է **դիք** բառի բացատրության մեջ: **Դիք** բառի համար բացատրական բառարանները տալիս են առաջին իմաստը՝ **հեթանոսական աստվածներ**, իսկ երկրորդ նշանակությամբ՝ **հեթանոսական աստվածների պատկերներ՝ արձաններ, կուռք:**

Ըստ *Աստվածաշնչի* Դ Թգ. ԺԷ 30-31-ում նկարագրվում են բազմաթիվ կուռքեր, որոնց պաշտում էին տեղի բնակիչները՝ բաբելացիները կառուցել էին **Սոքոթան** ու **Բանոթը**, քուբացիները՝ **Անգեղը**, եմաթացիները՝ **Ասիմաթը**, այլիացիները՝ **Աբլազերը**, **Նեբասը**, **Թարթակն** ու

Սեփփարուիմը. սեփարուիմացիների պաշտած կուռքերն էին Ադրամելեքն ու Ամամելե(ի)քը, որոնց մարդիկ զոհում էին իրենց որդիներին՝ կրակի մեջ այրելով:

Առանձին-առանձին ներկայացրել ենք **Աստարտ, Ադրամելեք, Բահադ, Բեհեղզերուդ, Բել, Բելփեզովր, Փագովր, Բելիար, Դագոն, Մեղքոմ, Թարթակ, Նեսրաք, Նեռ, Ներգալ, Ռեփան** անունները և դրանք կրող կուռքերին:

«Հրեշտակներ, հրեշտակապետեր և դրանց անունները» բաժնում տրվում է *հրեշտակ* բառի թե՛ լեզվական, թե՛ աստվածաշնչական մեկնությունը՝ հանգամանորեն անդրադառնալով **սերովբե, քերովբե, Գաբրիել, Միքայել, Ռաֆայել** անունների քննությանը:

Գլուխ վեցերորդ

Այս գլխում՝ **«Աստվածաշնչի եբրայական անունների քննություն (անձնանուններ և տեղանուններ)»**, քննում ենք եբրայական անունները՝ դրանք մասնավորեցնելով երեք իմաստային խմբերում՝

նահապետներ և դրանց անունները,

մարգարեներ և դրանց անունները,

լեռնանուններ:

Պետք է միշտ նկատի ունենալ, որ *Հին Կրակարանը* որոշ բացառություններով գրվել է եբրայերեն և գրվել է հրեա ժողովրդի մասին, ուստի հատուկ անունների բացարձակ մեծամասնությունը (տեղանուն թե անձնանուն) ունեն հրեական ծագում:

Թարգմանվելով հունարեն և ասորերեն՝ եբրայական անունները հաճախ աղավաղվել են՝ ենթարկվելով հունական կամ ասորական տառադարձման: Սա է պատճառը, որ բուն եբրայական անունը հայերեն թարգմանություններում մի դեպքում հունական ձևով է բերվում, մեկ այլ դեպքում՝ ասորական, ինչպես օրինակ՝ *Աբելը* (հուն.՝ Ἀβελ, ասոր.՝ ܐܒܠ Լավել). *Հաբել* հնագույն ձևն առաջացել է *Սուրբ Գրքի* ասորերեն թարգմանությունից, իսկ *Աբելը*՝ հունականից: *Աստվածաշնչում* (Սահակ-Մեսրոպյան թրգմ.) միակ գործածությունը *Հաբել* ձևն է (Ծն. Դ 2, 4, 8, 9, 25, Եբր. ԺԱ 4, ԺԲ 24): Ըստ *Աստվածաշնչի* համաբարբառի՝ միայն երկու գործածություն է բերվում *Աբել* ձևով՝ «*Հայեցաւ Աստուած յԱբէլ*» (Ծն. Դ 4) և «*Յարեաւ Կային ի վերայ Աբէլի*» (Դ 8):

Ծննդոցի 12-50-րդ գլուխներում նկարագրվում է հրեա նահապետների

կյանքը: *Աստվածաշունչը* ուղղակի նշում է այն կապը, որ ձգվում է Աբրահամից մինչ Հիսուս. «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդույ Դավթի որդույ Աբրահամու...» (Մտթ. Ա 1): Եվ քանի որ Ադամն է մարդկության նախահայրը, նահապետների անվանացանկը սկսվում է հենց **Ադամ**-ով: Եվ ապա տրվում են մյուս նահապետների՝ **Աբրահամի, Ասքանազի, Եբերի, Ենոքի, Թորգոմի, Իսահակի, Հակոբի** և մյուսների անուններն ու անձերի մասին հանրագիտարանային տեղեկություններ, որոնք ինչ-որ չափով ավելի են բացահայտում անունների նշանակությունները:

Հին Կտակարանի բաղկացուցիչ գրքերից են *Մարգարեությունների* գրքերը, որոնք թվով 16-ն են հենց մարգարեների անուններով՝ *Եսայու, Երեմիայի, Եզեկիելի, Դանիելի, Ովսեեի, Հովելի, Ամուսի, Աբդիուի, Հովնանի, Միքիեի, Նավումի, Ամբակումի, Սոփոնիայի, Անգեսի, Զաքարիայի և Մաղաքիայի*, որոնցից թեև 12-ը համարվում են փոքր մարգարեներ (իրենց նյութի ծավալի առումով) և ընդամենը 4-ը՝ ավագ, բայց անկախ այդ տարբերակումից, յուրաքանչյուրի մարգարեությունը խիստ էական է ու այնքան որոշիչ, որ *Մարտոսի Ավետարան*ում Հիսուսը հայտնում է. «Մի՛ համարիք, եթե եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ՝ լնու» (Մտթ. Ե 17-18):

Աստվածաշնչում մարգարեների առաքելությունը արքաներին ու ժողովրդին ճշմարիտ հավատքի ուղու վրա պահելն էր, և ժողովրդի համար նրանք Աստծու առաքյալներ էին: Միապետության 280 տարիների ընթացքում նրանցից ոչ մեկը գրավոր փաստաթուղթ չի թողել, բացառությամբ Հովելի և Աբդիուի²²: Սակայն պետք է նշել, որ թե՛ Հուդայում (Հարավում), թե՛ Իսրայելում (Հյուսիսում) մեծ թվով մարգարեներ թողել են վկայություններ. Հյուսիսում՝ **Հովնանը, Ամուսը, Օսեեն**, Հարավում՝ **Աբդիուն, Հովելը, Եսային, Միքիան**, բաբելոնյան գերությունից հետո՝ **Նաումը, Սոփոնիան, Ամբակումը, Երեմիան**, գերության և ազատագրության շրջանում՝ **Եզեկիելը, Դանիելը, Անգեն, Զաքարիան, Մաղաքիան**:

Այս բոլոր մարգարեների անունները ունեն եբրայական ծագում, անունների նշանակությունները, ըստ տարբեր աղբյուրների, հիմնականում նույնն են, սակայն երբեմն կան բացատրությունների հակասություններ, տվյալ անվան մի քանի մեկնություններ:

²² Տե՛ս **Ահ. Կայայան**, *Հին Կտակարանի ներածություն*, էջ 175:

Թե՛ նահապետների, թե՛ մարգարեների անունները ներկայացնելիս անպայման անդրադառնում ենք համանուն հատկանուններին:

Աստվածաշնչի հատուկ անունների՝ մեր ուսումնասիրության մեջ իրենց ուրույն տեղն ու դերն ունեն լեռնանունները, որոնց քննությանը նվիրել ենք մի ամբողջ բաժին: Լեռնանունները ոչ պակաս չափով իրենց մեջ կրում են ոչ միայն հրեաների, այլև բազմաթիվ այլ ցեղերի ու ժողովուրդների պատմության ինչ-որ տարրեր, և այդ անունների քննությունը ևս ի ցույց է դնում բազմաթիվ հետաքրքիր իրողություններ:

Մեծ է լեռան խորհուրդը *Սուրբ Գրքում*:

Եթե ուշադիր լինենք, ապա կնկատենք, որ Աստված իր բոլոր մեծ ու փոքր գործերը լեռների վրա էր կատարում: Հիշենք մի քանիսը. Նոյի տապանն իջավ Արարատ լեռան վրա, Աստված Աբրահամին պատվիրեց բարձրանալ լեռան վրա և այնտեղ զոհաբերել իր Իսահակ որդուն, Սինա լեռան վրա բարձրացավ Մովսեսը և Աստծուց ստացավ քարե Տասնաբանյան, Քրիստոսը խաչվեց Գողգոթայի վրա, և վերջապես Սինա լեռը հոչակված էր իբրև Տիրոջ լեռ:

Հին ժողովուրդներն ու ցեղերը սիրել են իրենց քնակությունը հաստատել անպայմանորեն լեռների փեշերին, և այդպես հիմնադրվել են խոշոր գյուղեր, քաղաքներ, անգամ երկրներ: Ու քաղաքը հիմնադրողի անունով էլ կոչվել են թե՛ քաղաքը, թե՛ լեռը, թե՛ դաշտը, անգամ գետը: Այդպես լեռները անվանվել են՝ *Նեփթադիմի անունից՝ Նեփթադիմի լեռներ*, *Հուդայի անունից՝ Հուդայի լեռներ*, *Եփրեմի անունից՝ Եփրեմի լեռներ*, և սա դարձյալ փաստում է մի օրինաչափություն դարձած ճշմարտություն, որ միշտ անձնանունից է առաջանում տեղանունը:

Գլուխ յոթերորդ

Աշխատանքի վերջին գլուխն անվանել ենք՝ **«Աստվածաշնչյան ոճանուններ»**: Այս տերմինը ստեղծել ենք մենք և դրա վերաբերյալ արել մի քանի հրապարակումներ՝ ընթերցողներին **ոճանուն** տերմինի մասին ավելի լավ պատկերացում տալու համար:

Մենք այս գլխում կարևորել ենք հատուկ անունների մի յուրահատուկ դրսևորում՝ հասարակ անունների՝ իբրև հատուկ կիրառությունները:

Հայ հին և միջնադարյան բանաստեղծների գործերում հաճախ հանդիպում են աստվածաշնչյան հասարակ անուններ մեծատառ գրությամբ:

Հայ բանաստեղծության մեջ սփռված հարյուրավոր օրինակները հիմք են տալիս հավաստելու, որ յուրաքանչյուր բան՝ ցանկացած խոսքի մասի պատկանող, բառակապակցություն, շարահյուսական կաղապար, անգամ նախադասություն, կարող է դառնալ ոճանուն, երբ այդ բառը բանաստեղծի համար դառնում է խորհրդանիշ և արտահայտում է որոշակի անձ, գաղափար, հավատամք: Դա բանաստեղծի էությունն է, որ ոճական այդտեսակ ձևավորում է ստանում:

Ոճանունները կարելի է բնութագրել մի քանի էական հատկանիշներով.

1. Հասարակ անունը ոճանուն է դառնում որոշակի խոսքային միջավայրում: Գեղարվեստական պատկերից դուրս ոճանուն չկա:

2. Ոճանունը զուտ ոճական արժեք ունի: Դրանց ստեղծումը գրողից պահանջում է բարձր ճաշակ, երևույթների իմաստների ընդհանրությունը տեսնելու սուր դիտողականություն, մի հանգամանք, որն էլ այլ առանձնահատկությունների հետ պայմանավորում է գրողի անհատականությունը, ինքնատիպությունը:

3. Բառի՝ իբրև ոճանուն հանդես գալը նրան ներքին անսպառ լիցք է տալիս, բառն ասես թարմանում է, եղած իմաստների կողքին ձեռք բերում նոր իմաստ, նոր ըմբռնում և ընկալում: Միանգամայն ճիշտ էր. Ջրբաշյանը նշում է, որ սկսած 30-ական թթ., Հ. Թումանյանի մի շարք հրատարակությունների մեջ հատուկ մտահղացմամբ գրված մեծատառերը վերացվել են լրիվ կամ մասամբ:

Ոճանունների գործածությունների ակունքը, մեր ուսումնասիրմամբ, *Աստվածաշունչն է:*

Ոճանունների կիրառությունը *Աստվածաշունչում* պատահական բնույթ չի կրում, ուստի դրանց մի մասը քննել ենք առանձին-առանձին, ինչպես՝ *Արքա, Սրբություն սրբոց, Սուրբ, Ջրհեղեղ, Գառ, Կենաց ծառ, Սաբել* և այլն:

Չպետք է շփոթել մականունները ոճանունների հետ. մականունները կոնտեքստից դուրս ճանաչելի են. եթե **Վիշապաբաղ**, ուրեմն՝ Վահագն, եթե **Աղեղնավոր**, ուրեմն՝ Հայկ, եթե **Նագովրեցի**, ուրեմն՝ Հիսուս, **Երանելի**, ուրեմն՝ Հոբ: Աստծուն տրվող մականունները ևս ճանաչելի են՝ **Բարձրյալ, Ամենակարող, Փրկիչ** և այլն: Մինչդեռ ոճանունները այս ճանաչելիությունը չունեն. նրանք հասարակ անուններ են, որոնք միայն որոշակի գործածություններում են դառնում ոճանուն, գրվում մեծատառով, ինչպես **Արքա, Գառ, Հայր, Տեր** և այլն:

Եզրակացություններ

Լինելով *Աստվածաշնչի* հնագույն թարգմանություններից՝ հայերեն *Սուրբ Գրքը* անցել է ավելի քան հազարյոթհարյուրամյա ճանապարհի և անշուշտ անսպառ նյութ է տալիս ու շարունակելու է տալ ամենատարբեր դիտանկյուններից ուսումնասիրություններ կատարելու համար:

Աստվածաշնչի հատկանվանաբանություն հետազոտությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին:

1. *Սուրբ Գրքի* թարգմանությունը որևէ կոնկրետ թվականի հետ կապելը ճիշտ չէ. *Աստվածաշնչի* թարգմանությունը անպայմանորեն պետք է դիտարկել իբրև մի գործընթաց, որն սկսվել է դեռ մինչև գրերի գյուտը և իր վերջնական տեսքը ստացել հինգերորդ դարի երեսնական թվականներին՝ ունենալով 3 թարգմանություն:

2. Մեր ուսումնասիրությունը հանգեցնում է նրան, որ հայերեն թարգմանությունը բավական երկար ժամանակում և տարբեր թարգմանիչների կողմից կատարված աշխատանք է, և որ, ամենակարևորը, այն կատարվել է հունական և ասորական տարբեր բնագրերից: Անունների թարգմանական տարբերակները հաճախ ավելի համարժեք են հունական ձևերին: Հայերեն անունները համեմատվել են ինչպես գրաբար, արևմտահայերեն, արևելահայերեն տարբերակներում, այնպես էլ տրվել են հունարեն, ասորերեն և ռուսերեն սկզբնաղբյուրների, ինչպես նաև հատուկ անուններն ընդգրկող բառարանների համեմատությամբ:

3. Մենք վերստին համոզվում ենք, որ հատուկ անուններն ընդհանրապես, մասնավորապես անձնանունները, Աստծու, Աստվածամոր անունները, լեզվաբանական միավորներ լինելով, իրենցում ոչ միայն լեզվական, այլև խորքային (ագգային, հոգևոր-մշակութաբանական, սոցիալ-պատմական) մեծ տեղեկություն են պարունակում, ինչպես նաև ապահովում ժողովուրդների միջև այդ ամենի փոխհաղորդում:

4. Առանձնակի կարևորում ենք *Աստված* բառը, որի ստուգաբանությունը ինչ-որ չափով խարսխվում է հենց *Սուրբ Գրքի* ընձեռած փաստերի վրա, առաջին հերթին ***Էլոհիմ*** և ***Սաբավոլթ*** անունների զուգադրահամեմատական քննությամբ:

Աստված-ը համարժեքն է եբրայական բնագրի ***Էլոհիմ***-ի. երկուսն էլ ունեն նույն նշանակությունն արտահայտող բաղադրիչ՝ ***է/ալ- ասր = ուժ, զոր:***

Մենք կարծում ենք՝ ***աստուած*** բառը պետք է բաղադրել ***աստր-ու-ած***,

որտեղ **աստ** նշանակում է **ուժ, զորություն**, իսկ **ածը ածել** բայի արմատն է, որ նշանակում է *իր հեղինակի փանել*, այսինքն՝ **զորությամբ փանող**: Եվ եթե հայերեն բնագրերում տրվում է **Չորությունների Տեր, Տեր Չորութեանց** տարբերակը, ապա գրեթե նրա կողքին չի հիշատակվում **Աստվածը**, որն էլ հստակորեն փաստում է այն, որ **Աստվածը և Չորությունների Տերը** նույն գերագույն ուժի անվանումներն են հայերենում:

5. *Նոր Կտակարանը* գրվել է հունարեն, և քանի որ այս դեպքում հայ թարգմանիչները միջնորդավորված թարգմանություն չեն կատարել, ուստի հատուկ անունների և անվանումների թարգմանության ժամանակ որոշակի հակասություններ գրեթե չկան:

6. Գերակա կուռքերի անունները տրվում են բազմաթիվ տարընթերցումներով, թարգմանական տարբերակներով, ինչպես *Աստարտը, Բահաղը, Բեեղզերուղն ու Բելիարը*, որոնց քննությանն էլ անդրադարձել ենք մեր աշխատանքում՝ համեմատելով ինչպես գրաբարարևմտահայերեն-արևելահայերեն, այնպես էլ հունարեն և ռուսերեն բնագրերի հարուստ նյութը:

7. Հատուկ անունների իմաստային խմբերից եբրայական անձնանունների երկու մեծ խմբի, մասնավորապես՝ նահապետների և մարգարեների, իսկ տեղանուններից՝ լեռնանունների ներկայացումը որոշակի պատկերացում է տալիս հայերեն թարգմանություններում ընդհանրապես թե՛ անձնանունների, թե՛ տեղանունների տառադարձական առանձնահատկությունների, տարընթերցումների, տարբերակային ձևերի մասին, որն անշուշտ շատ կարևոր է սուրբգրային տեքստը ավելի լավ ընկալելու տեսանկյունից:

8. Որոշակի կարևորվում է հատուկ անունների մի այլ յուրահատուկ գործառական առանձնահատկություն՝ հասարակ անունների՝ իբրև հատուկ անուն կիրառությունները, որոնք երբեք չի կարելի շփոթել մականունների հետ:

Գեղարվեստական պատկերավորման այդ հնարքը շատ տարածվեց նաև ժամանակակից գրականության մեջ՝ սկսած Հովհ. Թումանյանից և Վ. Տերյանից՝ փոխանցվելով մյուսներին՝ Ե. Չարենց, Պ. Սևակ, Հովհ. Շիրազ, Ռ. Դավոյան և մյուսներ:

Ուսումնասիրության հիմնական արդյունքներն արտացոլվել են հետևյալ հրապարակումներում:

1. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հայրկանվանաբանություն*, ԵՊՀ

- իրատ., Եր., 2017, 508 էջ:
2. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հայրկանվանագիրություն* (տառադարձություն, ուղղագրություն...), Երևանի պետական համալսարան, Եր., 2008, 104 էջ:
 3. Մեյթիխանյան Փ. Գ., *Հայրուկ անունները և ոճանունները գեղարվեստական չափածոյում*, Նորք, Հայաստանի գրողների միության գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական հանդես Եր., 1999, № 1, 163-175:
 4. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչյան անունները հայ բանաստեղծության մեջ*, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Եր., № 3, 2002, 45-61:
 5. Մեյթիխանյան Փ. Գ., *Հին Կտակարանը իբրև հայրուկ անունների առաջացման սկզբնաղբյուր*, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, № 3 (609) սեպտեմբեր-դեկտեմբեր, Եր., 2003, 62-72:
 6. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հայրուկ անունների բառարանները*, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, գիտական աշխատություններ, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Դ պրակ № 4, 2004, 135-142:
 7. Մեյթիխանյան Փ. Գ., *Մեսրոպ Մաշտոցը և Սուրբ Գրքի թարգմանությունը*, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Եր., № 3 (32), 2007, 59-65:
 8. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հայրկանվանագիրություն. մարգարեներ*, Հայ աստվածաբան, գիտական հոդվածների ժողովածու, № Բ, Երևանի պետական համալսարան, աստվածաբանության ֆակուլտետ, Եր., 2008, 19-30:
 9. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հայրկանվանագիրության հիմնախնդիրները և եզրաբանությունը*, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Եր., № 4 (37), 2008, 66-77:
 10. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հայրկանվանագիրություն. Լեռնանուններ*, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, № 3 (629) սեպտեմբեր-դեկտեմբեր, Եր., 2010, 269-278:
 11. Մեյթիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչյան ոճանուններ*, Նորք, Հայաստանի գրողների միության գրական-գեղարվեստական,

- հասարակական-քաղաքական հանդես, № 1, Եր., 2011, 141-150:
12. Մեյքիխանյան Փ. Գ., *Աստվածաշնչի հատկանվանագիտություն. երբայական անունների քննություն*, Տարեգիրք, Ը, Երևանի պետական համալսարան, Եր., 2013, 86-106:
 13. Մեյքիխանյան Փ. Գ., *Աստծուն տրված անուններն ու անվանումները Սուրբ Գրքում*, Բանբեր հայագիտության, հայագիտական միջազգային հանդես, Եր., 2015, № 3, 155-171:
 14. Մեյքիխանյան Փ. Գ., *Յարուկ անունների թարգմանական տարբերակները Աստուածաշունչ գրքերում*, Հանդես ամսօրեայ, հայագիտական ուսումնաթերթ, № 1, Վիեննա-Երեւան, 2016, 429-456:
 15. Մեյքիխանյան Փ. Գ., *Աստծու անուններն ու անվանումները Սուրբ Գրքում (Հայր Աստված)*, Պատմաբանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., № 1(201), Եր., 2016, 141-158:
 16. Մեյքիխանյան Փ. Գ., *Կուռք, դիք, չաստված և դրանց անունները Աստվածաշնչում*, ՎԷՄ, համահայկական հանդես, Եր., թիվ 1, 2016, 98-109:
 17. Մեյքիխանյան Փ. Գ., *Էրոհիմ-Աստված, Սաբա(վ)ովթ-Ձորությունների Տեր բառերի ստուգաբանության շուրջ*, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրտ., № 1 (646) հունվար-ապրիլ, Եր., 2016, 232-248:
 18. Մեյքիխանյան Փ. Գ., *Սուրբ Գրքի հայերեն թարգմանության խնդիրը և Մաշտոցի դերը այդ գործում / Հայկազյան Հայագիտական Հանդես, հ. 37, Բեյրութ, 2017, էջ 435-440:*

МЕЙТИХАНЯН ПАРАНДЗЕМ ГАРНИКОВНА БИБЛЕЙСКАЯ ОНОМАСТИКА

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10.02.01 – «Армянский язык».

Защита состоится 25.09.2017г. в 15⁰⁰ на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК при Институте языка им. Р. Ачаряна НАН РА (адрес: 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича, 15)

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию собственных имен в Библии. С этой целью нами во введении систематизирована та терминология, которая включает в себя библейские собственные имена.

Интерес к Библии никогда не иссякает, наоборот, эта книга остается самой читаемой книгой во всем мире, если не единственной в этом качестве. Каждый читатель, вне зависимости от своей профессии, качества образования и глубины, желает полностью понять каждую фразу Священного Писания. Это понимание становится более доступным и глубинным, если в числе многих вопросов правильно воспринимаешь также собственные имена, места и личностей, которые носят библейские названия.

Написанный на древнееврейском языке Ветхий Завет был переведен на армянский в V веке под воздействием греческого и сирийского текстов как в целом, так и, в частности, с точки зрения перевода собственных имен.

В XXI веке Библия предстает перед армянским читателем в трех вариантах - на грабаре, восточноармянском и западноармянском языках, где собственные имена в плане перевода имеют как общности, так и определенные отличия, которые обусловлены разными факторами, о которых говорится в диссертации.

В семи главах работы исследуются собственные имена, согласно терминологии, систематизированной во введении.

В первой главе особенно выделяется вопрос важности армянского перевода, этот перевод рассматривается как длительный процесс, который включает в себя 3 этапа.

Вторая глава посвящена словарям, где представлены библейские собственные имена, в сравнении с которыми мы исследовали ономастический материал в нашей диссертации.

Третья глава состоит из трех разделов, в первом из которых – **“Ветхий Завет как первоисточник собственных имен”** – говорится о начальном состоянии имен Ветхого Завета, где имена собственные часто не различаются от апеллятивов, и вместо собственного имени дается его дословное значение в древнееврейском, которое нам, последующим читателям, дает представление об образовании имен, в частности собственных. Во втором разделе – **“Библия как первоисточник армянских фамилиеобразующих форм”** – говорится о том, что Библия – своеобразный первоисточник, показывающий процесс создания и формирования армянских фамилий; в разных библейских книгах уже замечаем определенные модели армянских фамилий с суффиксами *-յաւն(-յաւնց)/-եան* и *-աղի. -եղի. -ցի.*

Особенно в Пятикнижии встречаются многие топонимы, которые переведены, например – *Արևալենհիների քաղաք* > *город пальм* (Иерихон), *Արեգ քաղաք* > *город Солнца* (Он, Гелиополис), *Սևրբրրուբյուն* > *Тишина* (Ровофт), *Քերեզնիս քաղաք* > *город Могила* (Хаммон), *Քաջաք քաղաք* > *город Смелых* (Гесем) и т.д., при этом в трех армянских переводческих текстах (грабар – Ա-1, западноармянский – Ա-2, восточноармянский – Ա-3) названия представлены по-разному.

Вот почему раздел данной работы – **“Переводческие варианты собственных имен в Библейских книгах”** посвящен этому типу переводов.

В главе **“Анализ особенностей транслитерации библейских собственных имен”** мы выделили орфографические и транслитерационные закономерности и отклонения собственных имен, показали многочисленные разночтения и противоречия, также представили склонение и особенности образования множественного числа имен собственных.

Центральная фигура Священного Писания – это Бог, который в разных книгах представляется разными именами. Вот почему мы в эту главу включили разделы **“Об этимологии слов Элоим-Бог, Саваоф – Сила воинства”**, **“Идол, языческие божества, небог и их названия в Библии”**, **“Ангелы, архангелы и их названия”**.

Ветхий Завет с некоторыми исключениями был написан на древнееврейском языке, поэтому абсолютное большинство собственных имен (и топонимов, и антропонимов) имеют еврейское происхождение.

Еврейские имена при переводе на греческий и сирийский часто искажались, так как подвергались греческой или сирийской транслитерации. По этой причине исконно еврейское имя в армянских переводах в одном случае приводится в греческой фонетической форме, в другом – в сирийской. Исходя из этого, мы в трех разделах следующей главы исследуем имена праотцов и пророков, а из топонимов – оронимы.

Последнюю главу работы мы назвали **“Библейские стилистические имена”**, где выделили еще одно специфическое проявление собственных имен – употребление апеллятивов в статусе имен собственных.

Огромное количество имен, нами проанализированных, является богатым языковым материалом для дальнейших лингвистических и филологических исследований, а это, в свою очередь, становится основой для серьезных выводов о главном вопросе – с какого языка был сделан армянский перевод Священного Писания.

Новый Завет был написан на древнегреческом, и так как в этом случае армянские переводчики не делали опосредованного перевода, определенных противоречий между именами и названиями при переводе почти нет.

Полученные научные результаты данной работы имеют как теоретическое, так и практическое значение и могут быть использованы в таких областях, как филология, в частности лингвистика, ономастика, так и теология.

P. G. MEYTIKHANYAN

BIBLICAL
ONOMASTICS

Thesis for obtaining the academic degree of Doctor of Philological Sciences on the specialty Armenian Language –10.02.01.

The defense will be held on 25. 09. 2017 at 15⁰⁰, at the session of the Specialized Council on Linguistics 019 RA Supreme Certifying Commission in the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (Address: 15 Gr. Lousavorich Str., Yerevan, 0015, RA)

SUMMARY

The thesis is devoted to the study of proper names in the Bible. To carry out the research the terminology including biblical proper names was systematized.

The interest towards the Bible never declines and it still remains the most, if not the only, widely read book. Regardless of profession and education every reader seeks to fully perceive the Holy Scripture, which becomes much easier if there is a better understanding of biblical names of places and people.

The Bible, originally written in Hebrew, was first translated into Armenian in the 5th century. However, the translation of the whole book and the proper names in particular was heavily influenced by the Greek and Assyrian languages.

For the 21st century Armenian reader the Bible is available in Grabar (i.e. Old Armenian), Eastern and Western Armenian, the two standardized forms of Modern Armenian. The thesis studies and reveals the similarities and differences of the translation of the proper names conditioned by different factors.

The seven chapters of the thesis examine the biblical proper names according to the terminology presented in the introductory part.

The first chapter of the thesis pays a special attention to the importance of the first translation of the Bible into Armenian, which was a long process consisting of three stages.

The second chapter of the thesis is devoted to the biblical proper names given in the dictionaries according to which the onomastic study is held.

The third chapter consists of three parts the first of which “**The Old Testament as a Source of Proper Names**” concerns the initial status of proper names of the Old Testament in which they are either often confused with appellatives or are literally interpreted according to their meaning in Old Hebrew, which, in its turn gives us an opportunity to further understand the origin of the proper names.

The second part “**The Bible as a Source of Formation of Armenian Surnames**” considers the Bible as a unique source to study the origin and the formation of Armenian surnames. In different books of the Bible we find Armenian surname forming suffixes such as – **yan/ian (yants) –atsi/etsi, and –tsi.**

“Translation Variants of the Proper Names in the Books of the Bible” is the last part of the third chapter which studies and compares different versions of translation of the same name. The toponyms particularly in Pentateuch are translated as, for example, **the City of Palm (Jericho), Sun City (On, Heliopolis), Tranquility (Robovt), Cemetery City (Hamona), City of Gallants (Gesem)** etc. In all the three Armenian (Grabar or Old Armenian (A 1), Western Armenian (A 2) and Eastern Armenian (A 3)) variants of the translation of the Bible the proper names are presented differently.

The chapter of **“The Analysis of Transliteration of the Proper Biblical Names”** studies and reveals the regularities and deviations of the transliteration and spelling of the biblical proper names, a number of discrepancies and contradictions, and the peculiarities of declension and the formation of the plurals of the proper names.

The central figure of the Holy Scripture is God who appears under different names in different Books of the Bible. This chapter includes the following parts **“On the Etymology of the Words Elohim-God, Sabavozt - Heaven Host”**, **“Idol, god, Pagan Dieties and Their Names in the Bible”** and **“Angels, Archangels and Their Names”**.

The Old Testament is mainly written in Hebrew and is about Jewish people, which explains the Hebrew origin of most proper names (both toponyms and anthroponyms).

In Greek and Assyrian translations Hebrew names often underwent Greek and Assyrian transliteration in the result of which most of the names were distorted. In the Armenian version of the translation of the Bible the pure Hebrew proper names are presented either in Greek or Assyrian phonetic form. The three parts of the next chapter study the names of forefathers, prophets and oronyms.

The last chapter of the thesis **“Biblical Stylistic Names”** reveals one more particularity of biblical proper names that is the usage of appellatives as proper names.

The great number of the proper names studied in the thesis serves as a basis for further linguistic and philological studies, which in its turn is fundamental to the issue of the original language from which the Holy Scripture was translated into Armenian.

The New Testament was originally written in Old Greek which explains the absence of contradictions in the translation of the proper names into Armenian.

The scientific results of the research are of both theoretical and practical value and can be used in philology, particularly in linguistics and onomastics, and theology.

